

Գիրքը լուսապատճենահանվել է  
"ՀամաՀայկական Էլ. Գրադարան"

կայքի՝ [www.freebooks.do.am](http://www.freebooks.do.am)

կողմից եւ Շերկայացվում է իր  
այցելուների ուշադրությանը:

The book created by "PanArmenian E. Library"



Գիրք կարող է  
օգտագործվել միայն ընթերցանության համար...

For more info: [www.freebooks.do.am](http://www.freebooks.do.am)

library

ԴԱԼԻ ԱԼԻՎՈՒ ԿՈՂՈ, ԵՎ ՅԵՐ ՆԵՐՈՒՄ ԼԻՇԱԾ, ՀԱՅԱՍՏԱՆ  
ԳՐԱՎԱԼԽԵՅԱ ՏՐՈՅՈՒԹՅԱ ԳՈՐԾՈՒ ԵՎ, ԽԵՆԵՐԴ,  
ԸՆԴՊՈՅՑՔՎԱԾՈՒԵ, ԳՐԵՐ:

ԲՆԱԿ ԳՐԵՐԻ ԽԵՂՈՄՈՒ ՄԱԼԻՎԱՆԱԼԵԾ ԿՈՂՈ ԵՎ  
ԽՈՎՈԾ, "ՅՈՒՆԵՎԵՆԻԿԱՆ ԽԵՎՈՅՈՎԵՆ ԳՈՐԾՈՒ" ԿՈՎԱՆ

[www.freebooks.am](http://www.freebooks.am)

ԾԱԼԳՅԱԿՈՒ ԵՎ, ՈՐ ՕԳՏԱԼԻՇ Ե՞Զ ՄԵՐ ԿՈՎԱՆՈՒ:  
ՅԵՎԿՈՎՈՒՄ ԵՎ ՀՈԽԵՐԻ ԸՆԴԳՐԱՆՆԵՐՈՒՆ:



ԳՐԵՐ ՄԵՐ՝ [freebooks@rambler.ru](mailto:freebooks@rambler.ru)

ԶԱՐՈՒՀԻ ՄԻՒԿՑԱՆ

# ԱՐԵՎԱՏՈՎԱՅՏԻՐԻ



(«ԱԻՆՊԱՐԱԿԱՆ»)

# ԽՈՀԱՆՈՒ

ԶԱՐՈՒՅՆ ՄԽԻԿՅԱՆ

**ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԻ  
(«ԱԽՊԱՐԱԿԱՆ»)  
ԽՈՀԱՆՈՑ**

«ՎՄՎ-ՊՐԻՍ»  ՅՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ - 2004

Գրքում զեւողված են արեւմքահայերի (հիմնականում՝ հունահայերի) մի շարք ճաշարեսակների, խորպիկների, խմորեղնենների, սալաթների, եւ բնակելիքների պատրաստման եղանակները։ Ընդգրկված են նաև նրանց հետառողջների՝ մեր եւ ավելի երիտասարդների խոհանոցում իրենց ուրույն պեղն զբաղեցրած ուրեսակների բաղադրամասները եւ պատրաստման ձևերը։

**Վերջում՝ մի փոքր հոմոր:**

# ԱՐԵՎԱՏԱՐԱՅԵՐԻ ԽՈՐԱՆՈՑ

Շատ լայն է արևմտահայ հասկացությունը Տարբեր վայրերից գաղթած հայերն ունեն իրենց բնակության, ծննդավայրին յուրահատուկ ճաշատեսակներ, որոնք շատ են տարբերվում միմյանցից, ինչպես, ասենք, Հայաստանի տարբեր շրջաններն ունեն իրենց տեղանքին, բնակավայրին, կլիմային առանձնահատուկ ճաշատեսակներ եւ, կարելի է ասել, բավականին զանազանվում են նեկը մյուսից.

Քանի որ մանկությունս անցել է իմ մեծմայրիկների, իսկ ամուսնալուց հետո սկեսրոջս հետ, որոնք ծնվել էին Թուրքիայում, այնուհետեւ՝ Մեծ Եղեռնից հետո, հանգրվան գտել Հունաստանում, ես կներկայացնեմ իհմնականում արևմտահայերի այդ հատվածի ճաշատեսակները, որոնք ունեն հունական եւ (ցավոք) թուրքական անվանումներ.

Նրանք, կարելի է ասել, բանջարեղենը միշտ չորացնում էին Այնուհետեւ, շփվելով տեղաբնակների հետ, իրենք էլ սկսեցին որոշ ճաշատեսակներ պահածոյացնել, բայց, իհմնականում նախապատվորյունը տալիս էին չորացնելուն, իրենց կարծիքով, որպես ապահով միջոց.

Նրանց ճաշացանկի անբաժան մաս էին կազմում՝ բամիան, բակլան, սիսեռը, բիզելյան (ոլոռը), սպիտակ լոբին (ոչ կարմիր), ոչխարի միսը, ոսպը, զեյթունը (ձիթապտուղը), բաստորման, սուջուխը, ուղիկյան (խատուտիկը), փրասան (պրասը, սավզին), սխտորը, ուղեղը, լեզուն, ջիյերը (թոքը), տալախը (փայծաղը), սիրտը, երիկամը, ձկնեղենից սկումբրիան, ստավրիդան, սիգը եւ այլն.

Շատ էին օգտագործում ձեր

Չգիտեմ ինչու, համեմ առհասարակ չէին օգտագործում եւ համեմին ասում էին «թախթարիթի» (փայտոցիլ), գուցե հո՞տն իրենց դուր չէր գալիս Բայց, տարիների ընթացքում, սկսեցին օգտագործել նաեւ համեմ Օգտագործում էին մաղաղանոս, նեխուր, քերաբ օթը (քերիկ, խորովածի խոտ, ծիթրոն), իհմնականում մսով ճաշատեսակների համար Բրնձի փոխարեն ավելի շատ օգտագործում էին բլղուր.

Համեմունքներից գործածում էին՝ չաման, սեւ պղպեղ, քիմիոն, չաման, դարչին, մեխակ, դահին, բահար (դաշտական պեղություն), սումախ, լիմոնի աղ, բացախ, հիլ, դափնու տերեւ եւ այլն

Միշտ պատրաստում էին կարմիր պղպեղի խառնուրդով տոմատի մածուկ (սալշա, սալցա) Սի փոքր եփում, մառլյայով ծածկում եւ դնում էին բորք արեւի տակ մինչեւ պնդանալը

Մորական տատիկս հաճախակի պատրաստում էր «Ղափամա».

Սալաթների համար կտրատված սխսը միշտ աղով լավ ճմռում էին, լվանում, քամում եւ հետո օգտագործում.

Կաղանդի սեղանին անպայման լինում էր անուշապուր, սարք բուրմա, փախլավա, սկորդալյա, քեշքեկ (հարիսա), քաստուրմա, սուզուխ, ծիթապտուղ եւ շատ այլ ճաշատեսակներ, թխվածքներ ու սալաթներ:

Չատիկի սեղանին միշտ լինում էր քուլուրյա, ինչպես նաև քուլուրյայի խմորից պատրաստված զամբյուղներով զարդարված կարմիր ձվեր, չամչով փլավ Ի միջի այլոց, ամեն տեսակի փլավ եփելիս, փլավը պատրաստ լինելուց հետո մեծ մայրիկներս եւ սկեսուրուս կափարիչի տակից երկտակ ծալած մաքուր սրբիչ էին դնում.

Խմորաքերքերը բացելու համար օգտագործում էին միայն օխլավու, գրտնակ ընդհանրապես չէին գործածում.

Շատ էին սիրում կծու ճաշատեսակներ. Տանը միշտ ունենում էին պատրաստած չաման. Տոլման պատրաստում էին խաղողի տերեւով եւ փաթաթում շատ փոքր. Զմոան համար երբ տերեւ էին պահածոյացնում, սուս տոլմայի համար ընտրում էին շատ մեծ, առանց «ճեղքերի» տերեւներ եւ անպայման տարայի վրա նշում էին՝ «մեծ», իսկ մսով տոլմայի համար՝ փոքր տերեւներ եւ նշում՝ «փոքր». Ամոանը տոլման պատրաստում էին լահանայով (կաղամբով), սմբուկով, պղպեղով, լոլիկով, խնձորով, խաղողի տերեւով

Ամոան սեղանից անպակաս էր խոշաֆք (խառը մրգերից կոմպուտ), ջաջրիսը (մածնափրքոշ).

Շատ էին պատրաստում բումբար

Զմոան համար անպայման պատրաստում էին երիշտա, թարխանա

Տղամարդիկ հիմնականում խմում էին տնական, անխոնի յուղ խառնած օղի, որի մեջ մի փոքր ջուր լցնելուց հետո՝ օղին անմիջապես սպիտակում էր եւ կաթի տպավորություն թողնում

Կանաչիները միշտ չորացնում էին առանձին-առանձին, հաշվի առնելով, որ ամեն ճաշատեսակի համար անհրաժեշտ է իրեն յուրա-

հատուկ կանաչին եւ երբեք խառը կանաչի չէին չորացնում

Տատիկներս աղցան ասում էին միայն ուտելի, եփվող բանջարեղենին ծոտի պաշար, փիփերթ, սպանախ, ռադիկյա եւ այլն

Առաջին ճաշատեսակին ասում էին ապուր, սալաթին՝ սալաթա կամ փյազ, կոմպոտին՝ եւ, խոշաֆ, եւ կոմպոստ Իսկ մուրաքային անուշ

Միշտ մերում էին մածուն, իսկ նրանց թխած հացը մի յուրահատուկ համ եւ բույր ուներ.

Տատիկներից հաճախ եմ լսել. «Տանտիկինին մեկ ձեռքը «գող» պետք է ըլլա» արտահայտությունը. Այսինքն տանտիրուիկին պիտի խնայող լինի, «անկյունում» պահած որեւէ բան ունենա, որ անակնկալ հյուր գալիս կարողանա պատվել եւ հյուրասիրել. Եվ ասում էին. «Չեղած տեղեն ալ բանմը պիտի պատրաստես եւ հյուրասիրես, որ երեսդ պարզ ըլլա».

Այժմ կներկայացնեմ այն ճաշատեսակների, խորտիկների, սալաթների, խմորեղենների (որոնք կազմել եւ մինչեւ այժմ էլ կազմում են մեր սեղանների զարդը) պատրաստման եղանակները. Կան որոշ ուտեստներ, որոնք պատրաստման հիմնական շափեր չունեն եւ բաղադրամասերի շափերի ընտրությունը քողնում եմ տանտիրուիու հայեցողությանը եւ ֆանտազիային

Գրքում տեղ են գտել նաև արեւմտահայերի նոր սերնդի խոհանոցում իրենց ուրույն տեղն զբաղեցրած շատ ճաշատեսակների, խմորեղենների, սալաթների պատրաստման եղանակները.

## ՀԵՂԻՆԱԿ

# ԱՌԱՋԻՆ ԲԱՇԱՏԵՍԱԿՆԵՐ

## ՄՊԻՏԱԿ ԼՈԲՈՒ ՓԼԱՔԻ

Սպիտակ լորին ամբողջ գիշեր թողնել ջրի մեջ Առավոտյան ջուրը դատարկել, նոր ջուր լցնել, լավ եփել Երբ համարյա պատրաստ լինի՝ լցնել աղը

Կաթսայի մեջ ծեթը լավ տաքացնել, լցնել մանր կտրատած գլուխ սոխ, մինչեւ մի փոքր փափկի Ավելացնել կտրատած սխտոր եւ ստեպ-ոին (գազար), լավ խառնել, մինչեւ փափկեն Ավելացնել (ըստ ճաշակի) լոլիկի մածուկ կամ կտրատած լոլիկ, եփված լորին, աղացած սեւ եւ կարմիր աղպեղ, աղ, կտրատած նեխուր, տաք ջուր եւ եփել մինչեւ պատրաստ լինելը

Կարելի է մատուցել եւ տաք, եւ սառը

\*\*\*

Նույն ծեւով կարելի է պատրաստել սիսեռով, ոլոռով կամ բակլայով

\*\*\*

Վերը նշված փլաքիները կարելի է պատրաստել նաեւ ոչխարի մսով Այդ դեպքում արդեն սոխեռածը պետք է յուղով պատրաստել եւ ճաշը մատուցել տաք-տաք

## ՅԱՎԻ ՄՍՈՎ ԱՊՈՒՐ

Յավը կտրատել, լվանալ, շատ ջրով եփել Եփելու ընթացքում անընդհատ հեռացնել փրփուրը Երբ համարյա պատրաստ լինի, լցնել բրինձ, վերմիշել կամ լապշա (ըստ նախասիրության), երկարությամբ կտրատած ստեպոին (գազար), տոմատի մածուկ կամ կտրատած լոլիկ, շարունակել եփել, մինչեւ ապուրի պատրաստ լինելը Վերջում ավելացնել մանր կտրատած մաղաղանոս, իսկ եթե հավի միսը յուղալի չէ, ավելացնել նաեւ կարագ Մատուցել տաք-տաք



## **ԹԱՆԱՊՈՒՐ**

1 լիտր մածունը լցնել կաթսայի մեջ, լավ ծփել, լցնել նաեւ 1 տուփ թթվասեր, նորից ծփել, ավելացնել ջուր, լավ խառնել 2 ձուն հարել 2 ճաշի գդալ ալյուրի հետ, անցկացնել մաղով, որպեսզի գնդիկներ չմնան Լցնել լվացված կորկոտը (ձավարը) եւ դնել կրակին Երբ սկսի եռալ, կրակը մարմանդացնել, շերեփը թողնել կաթսայի մեջ եւ մեկ-մեկ խառնել Երբ կորկոտը եփվի, ավելացնել մանր կտրատած համեմ կամ նեխուր (ըստ ճաշակի), աղ եփվելուց եւ կրակից իջեցնելուց հետո դնել մի մեծ կտոր կարագ եւ խառնել՝ մինչեւ կարագը լուծվի.

## **ՍՊԻՏԱԿ ԱՊՈՒՐ**

Յավը լավ եփել Արգանակը քամել, լցնել կաթսայի մեջ եւ Երբ սկսի եռալ՝ աչքաչափով լցնել բրինձ, վերմիշել կամ բլղուր, կրակը մարմանդացնել եւ եփել Ավելացնել աղ. Երբ պատրաստ լինի, իջեցնել կրակից եւ թողնել հանգստանա.

Խոր ամանի մեջ 1-2 ձուն հարել լիմոնի աղի հետ եւ Երբ ապուրը գոլից մի քիչ տաք կլինի, շերեփով վերցնել արգանակից ու քիչ-քիչ, անընդհատ խառնելով լցնել հարած ձվի վրա՝ մինչեւ միատարր զանգված դառնալը, այնուհետեւ խառնել ապուրին, որն անմիջապես սպիտակում է Ավելացնել նաեւ կարագ. Եփած հավի կտորները լցնել ապուրի մեջ եւ մատուցել. Իսկ եթե ապուրն ավելանա եւ հետո կարիք լինի տաքացնել, պետք չէ եռացնել, որպեսզի ձուն չմակարդվի. Այս ճաշատեսակին կանաչի պետք չէ:

## **ՓՐԱՍՍ (պրաս, սավզի)**

Պրասը լավ լվանալ, կտրատել, առատ ծեթի մեջ տապակել: Ավելացնել կտրատած լոլիկ կամ տոմատի մածուկ, սեւ եւ կարմիր պղպեղ, տաք ջուր. Երբ մի քիչ եփվի, աչքաչափով լցնել բրինձ կամ բլղուր, աղ եւ լիմոնի աղ ու եփել մինչեւ պատրաստ լինելը.

Այս ճաշատեսակը շատ հարգի է հունահայերի մոտ եւ, եթե մեկը շատ կուշտ է լինում, բայց ստիպում են ճաշել, իրաժարվում է՝ ասելով.

- Փրասա ալ ըլլա՝ չեմ ուտեր

# **ԹԱՐԻԱՆԱՅԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ**

## **1-ին տարրերակ**

6 կգ մածունը թթվեցնել, լցնել կաթսայի մեջ, վրան լցնել 2,5 կգ լվացված ձավար, եփել մինչեւ միատարր զանգված դառնալը: Ավելացնել նաեւ աղը, շարունակել եփել մինչեւ պնդանա

Ավելացնել 1 կգ ալյուր, լավ խառնել եւ իջեցնել կրակից. Բաժանել գնդերի, դնել մաքուր կտորի վրա եւ թողնել չորանա, հետո տրորել, փշութեալ լավ չորացնելուց հետո լցնել տոպրակի մեջ

## **2-րդ տարրերակ**

Չարիսայի ցորենը աղալ, մաղել, որպեսզի հատիկներ չանցնեն, առանձնացնել նաեւ գոյացած ալյուրը

2 կգ մածունը քամել եւ քամված հյութի չափով սովորական, թարմ ջուր ավելացնել եփել մածունը, ավելացնել 1կգ աղացած ցորենը, մի փոքր էլ եփել եւ կափարիչը պինդ փակել, թողնել ամբողջ գիշեր. Առավոտյան շատ մաքուր ծեռքերով երկարավուն գնդիկներ պատրաստել եւ չորացնել. Լավ չորանալուց հետո լցնել տոպրակի մեջ.

## **ԹԱՐԻԱՆԱ ԱՊՈՒՐ**

Զուրը եռացնել, աչքաչափով լցնել թարիսանան եւ եփել Զեթով սոխեռած անել եւ լցնել եփված թարիսանայի վրա Առանձին թավայի մեջ ծեթով կարմրացնել նաեւ մանր, քառակուսիներով կտրատած հաց եւ լցնել թարիսանա ապուրի վրա. Ցանկության դեպքում, ավելացնել նաեւ չորացրած անանուխ.

## ՍՈՒԼՈՒ ՋՅՈՒԹ (քյուֆթա-բոզբաշ)

Կես կգ տավարի միսը (մի փոքր յուղոտ) եւ սոխը աղալ. Ավելացնել կես թեյի բաժակից մի քիչ ավել բրինձ կամ բլոր, չորացրած ծիթրոն, մի քանի ճյուղ կտրատած մաղաղանոս, աղ, սեւ եւ կարմիր պղպեղ, մի քիչ ջուր եւ լավ խառնել Հետո պատրաստել գնդիկներ եւ դնել բարակ շերտով ալյուր լցված սինու մեջ Երբ լրիվ խճողակն արդեն սպառված կլինի, սինին թափահարել, որպեսզի գնդիկները ալյուրոտվեն եւ եփել եռացող ջրով կամ արգանակով լցված կաթսայի մեջ. Երբ գնդիկներն արդեն եփված կլինեն, իջեցնել կրակից եւ թողնել ապուրը հանգստանա.



Այնուհետեւ վրան ավելացնել ձվի եւ լիմոնի աղի խառնուրդ ու կստացվի սպիտակ ապուրի նման ապուր

Մատուցելիս, ցանկության դեպքում, ափսեների մեջ կարելի է ավելացնել կտրատած մաղաղանոս

\*\*\*

Սուլու քյոֆթե կարելի է պատրաստել նաեւ լոլիկով կամ լոլիկի մածուկով՝ առանց ձվի խառնուրդի. Այդ դեպքում արդեն ճաշը կստացվի կարմրավուն.

## ԹՅՈՒՐԼԻ (այլազան, աջարսանդալ)` ՄՍՈՎ

Ոչխարի կամ տավարի միսը մանր կտրատել, սոխով եւ տոմատի մածուկով տապակել

Առանձին կաթսայի մեջ կանաչ լոբին թեթեւակի խաշել Հետո շերտ-շերտ լցնել լոբին, սմբուկը, կարտոֆիլը, օղակածել կտրատած կանաչ պղպեղը, սեւ եւ կարմիր պղպեղը, տապակած միսը, կտրատած համեմը եւ աղը Այդպես հերթականությամբ շարել Վրան ավելացնել տաք ջուր կամ արգանակ այնքան, մինչեւ մի քանի մատ բարձր լինի Սկզբուն եփել թեժ կրակի վրա, իսկ երբ սկսի եռալ, կրակը մարմանդացնել եւ եփել մինչեւ պատրաստ լինելը

Մատուցել տաք-տաք


## ԿԱՆԱՉ ԲԱԿԼԱՅՈՎ ճԱԾ



Կանաչ բակլայան մաքրել, լվանալ. Չեթով սոխեռած անել, ավելացնել կտրատած լոլիկ, 1-2 պճեղ կտրատած սխտոր, աղ, սեւ պղպեղ Յետո լցնել բակլայան եւ ջուրը Եփել մինչեւ բակլայան պատրաստ լինի Կրակից իշեցնելուց առաջ ավելացնել մանր կտրատած սամիթ .

## ԿԱՆԱՉ ԼՈԲՈՎ ճԱԾ

Լոբին մաքրել, կտրատել Միսն առանձին Եփել Յուղով սոխեռած պատրաստել, ավելացնել կտրատած լոլիկ կամ տոմատի մածուկ եւ մի փոքր էլ Եփել Լցնել լվացված լոբին, կափարիչով փակել եւ ժամանակ առ ժամանակ խառնել Երբ լոբին թեթեւակի դեղնի, ավելացնել Եփիված միսը, արգանակը, կտրատած կարտոֆիլը եւ Եփել մինչեւ լոբու պատրաստ լինելը Ավելացնել սեւ եւ կարմիր պղպեղ, աղ եւ կտրատած սամիթ Մատուցել տաք-տաք



## ԲԱՄԻԱՅՈՎ ճԱԾ

Բամիան մաքրել, լվանալ, 1-2 ժամ թողնել լիմոնի աղի թույլ լուծույթի մեջ Յետո հանել, լվանալ Մինչ այդ Եփել ոչխարի միսը (լավ է՝ մատները).


Յուղով սոխեռած պատրաստել, ավելացնել կտրատած լոլիկ, նորից Եփել Յետո լցնել բամիան եւ շարունակել Եփել. Երբ բամիան գույնը փոխի, ավելացնել Եփիված միսը, քամված արգանակը, սեւ պղպեղը եւ Եփել մինչեւ պատրաստ լինելը Իշեցնելուց առաջ ավելացնել մանր կտրատած մաղաղանոս.

## ԶԸՐՎԸՐԱ

Երկու կապ կանաչ սոխը կտրատել, ձեթով տապակել, ավելացնել մեկ կապ մաղաղանոս, սեւ եւ կարմիր պղպեղ, տոմատի մածուկ կամ լոլիկ, նորից եփել Լցնել 2-3 բաժակ ջուր Երբ ջուրը մի փոքր քչանա, ավելացնել 3 հատ հարած ձու, կտրատած մաղաղանոս աղ, լիմոնի աղ եւ եփել մինչեւ ձվերի պատրաստ լինելը

## ՆԵԽՈՒՐՈՎ (քյարավուզ, սելյարեյ) ԱՊՈՒՐ

Ոչխարի միսը կտրատել, խաշել Առանձին կաթսայի մեջ յուղ լցնել, դմել կրակին, ավելացնել կտրատած նեխուրը, թողնել փափկի, հետո ավելացնել կտրատած լոլիկ, նորից եփել Ավելացնել եփված միսը եւ արգանակը, աղ, աղացած կարմիր պղպեղ, լիմոնի աղ ըստ ճաշակի և երբ սկսի եռալ, լցնել բլղուր և եփել մինչև բլղուրի պատրաստ լինելը



## ՍՈԽՈՎ ՅԱՅՆԻ (չախորիլի)

Ոչխարի յուղոտ միսը կտրատել ոչ շատ մեծ կտորներով եւ ջրով կիսափ անել Մաքրել փոքր սոխեր (ցանկալի է հավասար մեծության ), յուղով մի փոքր տապակել, լցնել կիսափ մսի վրա, ավելացնել լոլիկի մածուկ, աղ, սեւ եւ կարմիր պղպեղ, կտրատած համեմ, դափնու տերեւ եփել մարմանդ կրակով, մինչեւ պատրաստ լինելը Մատուցել տաքտաք

Չախորիլի կարելի է պատրաստել եւ հավի մսով

# **ԵՐԿՐՈՐԴ ԲԱՇԱՏԵՍԱԿՆԵՐ**

## **ՂԸՅՄԱՅԻ ՊԱՏՐՎԱՏՈՒՄԸ**

Աղացած, յուղոտ տավարի միսը լցնել թավայի մեջ, մի փոքր յուղ ավելացնել եւ անընդհատ խառնելով՝ տապակել մարմանդ կրակով Լցնել շատ մանր կտրատած սոխ, դարձյալ խառնել Ավելացնել աղ, սեւ եւ կարմիր պղպեղ ու տապակել խառնելով, որպեսզի գնդիկներ չմնան Կարելի է օգտագործել զանազան ճաշատեսակներ պատրաստելու համար

## **ԿԱՐՏՈՖԻԼՈՎ ՄՈՒՍԱԿԿԱ**

Վերցնել համաչափ, օվալաձեւ կարտոֆիլներ, մեջտեղից երկայնակի կիսել, աղ ցանել, յուղով թեթեւակի տապակել, շարել տափակ կաթսայի մեջ Յուրաքանչյուր շերտին գդալով լցնել ղըյմա, վրան՝ մաքրված եւ կլոր-կլոր կտրատած լոլիկ, նորից աղ ցանել Այդանս շարունակել մինչեւ կաթսան լցվի Վերջին շերտի՝ լոլիկի վրա ավելացնել կտրատած համեմ, լցնել ջուր կամ արգանակ մինչեւ ծածկվելը եւ եփել մարմանդ կրակով Մատուցել տաք-տաք

Մուսակկան կարելի է եփել եւ ջեռոցում.

## **ԾԱՂԿԱԿԱՂԱՄԲՈՎ ՄՈՒՍԱԿԿԱ**

Ծաղկակաղամբը կտրատել, լվանալ, վրան եռման ջուր լցնել եւ թողնել մնա 10-15 րոպե, հետո լցնել փլավքամիչի մեջ, որ ջրքամվի. Յուղով տապակել՝ մինչեւ թեթեւակի վարդագունելը Այնուհետեւ եփել կարտոֆիլի մուսակկայի նման

## ԳԱՐՍԻ ՅԱՐԾԻ (Փորբ ճեղքած)

Համաչափի սմբուկները չորս տեղից մաքրել, մի կողմը դանակով երկարությամբ ճեղքել, աղ անել Յուղի մեջ տապակել, շարել ջեռոցի թիթեղի վրա՝ ճեղքված մասը դեպի վերեւ

### Միջուկը

Պատրաստել ղըյնա Այնուհետեւ ավելացնել կեղեւը մաքրած եւ քերիչով անցկացրած լոլիկ, մանր կտրատած մաղաղանոս, աղ եւ կրակին թողնել այնքան, մինչեւ լոլիկը եփվի

Պատրաստի միջուկով լցոնել սմբուկները, վրան մանրել կտրատած մաղաղանոս եւ դնել տաք ջեռոցը

Թեթեւակի կարմրելուց հետո անջատել Մատուցել տաք-տաք

## ԻՄԱՄ ԲԱՅԸԼԴՐ (իմամն ուշագնաց եղավ)

*Այս ճաշակեսակը պատրասպելու համար չեք շատ է օգտագործվում*

Վերցնել համաչափի սմբուկներ, հեռացնել կոթունները, չորս տեղից մաքրել, եւ մեկ կողմից դանակով երկարությամբ ճեղքել, աղ անել Սրբիչով չորացնել, առատ ձեթի մեջ տապակել եւ դասավորել տափակ կաթսայի մեջ՝ ճեղքված մասերը դեպի վերեւ Տապակել նաեւ քաղցր կանաչ պղպեղներ (կոթուններով) եւ մաքրել կեղեւները

### Միջուկը

Սմբուկները տապակելուց հետո ավելացած ձեթի վրա դարձյալ ձեթ լցնել, տաքացնել Սոխը կտրատել, սոխեռած անել Երբ մի փոքր վարդագունի, ավելացնել կտրատած կանաչ պղպեղ եւ սխտոր, եփել, մինչեւ պղպեղը փափկի Այնուհետեւ ավելացնել կեղեւահանված եւ կտրատած լոլիկ, դարձյալ եփել Վերջում ավելացնել կտրատած մաղաղանոսը, աղը, աղացած սեւ եւ կարմիր պղպեղը Երբ միջուկը պատրաստ լինի, ճաշի գդալով լցոնել սմբուկները, վրան շարել տապակած պղպեղները եւ ավելացած միջուկը Եփել մարմանդ կրակով


Կարելի է մատուցել եւ տաք, եւ սառը



## ՍՄԲՈՒԿԸ ԶՎՈՎ

Զորս տեղից մաքրած սմբուկը երկարությամբ կտրատել, թաթախել հարած ձվի մեջ եւ երկու կողմից տապակել առատ ծեթի մեջ Վրան լցնել կտրատած համեմ, սեւ եւ կարմիր պղպեղ (ցանկության դեպքում, նաեւ՝ սխտոր)

## ՄԻՆԻ ՄԱՆԹԵՍԸ



**ԽԱՄՈՐԸ**՝ 3 ծոլ, կես լիտր ջուր, 1 թեյի գդալ աղ, ալյուր. Պատրաստել այնպիսի խմոր, որ չկաչի ծեռքերին թողնել հանգստանա

**ՄԻՋՈՒԿԸ**՝ կես կգ տավարի կամ ոչխարի յուղոտ միսը եւ 1-2 միջին չափի գլուխ սոխը անցկացնել մսաղացով Ավելացնել կտրատած մաղաղանոս, համեմ, աղ, սեւ եւ կարմիր պղպեղ, լավ խառնել

Խմորը բացել ոչ շատ բարակ, կտրատել 4սմ x 4սմ քառակուսիներ, յուրաքանչյուրի վրա թեյի գդալի ծայրով դնել միջուկը եւ երկու ծայրերից սեղմելով՝ տալ նավակի տեսք Մանթըները շարել ջեռոցի թիթեղի վրա եւ երբ լցվի, յուղ ավելացնել, եփել նախօրոք տաքացրած եւ մարմանդ վառվող ջեռոցում, մինչեւ վարդագունելը Այնուհետեւ լցնել մսաջուր եւ եփել.

Մատուցել մածուն-սխտորով եւ յուղով

## ԴԵԶԵՐԹԱՄԱ

Ոչխարի ազդրի միսը մեծ կտորներով կտրատել, ճակտկել ու անցքերի մեջ սխտոր եւ սեւ պղպեղի հատիկներ խցել Առատ ջրով եփել Պատրաստ լինելուց հետո ազդրը հանել, Վրան քսել կարմիր պղպեղ խառնած թթվասեր եւ դնել ջեռոցը՝ մինչեւ կարմրի կտրատել բարակ շերտերով եւ մատուցել

## ԿԱՐՄԻՐ ԼՈԲԻ


Կես կգ կարմիր լոբին մի գիշեր թողնել ջոի մեջ:  
Առավոտյան ջուրը դատարկել, նոր ջուր լցնել եւ լավ  
եփել՝ համարյա մինչեւ ճաքելը Առատ ձեթով եւ 1 կգ  
սոխով սոխեռած անել, ավելացնել 1-ական կապ  
մանր կտրատած համեմ եւ մաղաղանոս, առատ տո-  
մատի մածուկ, եթե կա, նաեւ՝ կտրատած լոլիկ Ավե-  
լացնել աղ, սեւ եւ կարմիր պղպեղ, տաք ջուր եւ եփել,  
մինչեւ ջուրը ներծծվի եւ մնա աննշան քանակությամբ ջուր  
Նույն ձեւով կարելի է պատրաստել նաեւ սպիտակ լոբով



## ԻՉԼԻ (միջուկով, լցոնած) ՔՅՈՒԹԵ

*Սոլումորապես 100 հալի համար*

**Միջուկը՝** 2 կգ տավարի թարմ, յուղոտ  
միսը՝ 2 անգամ անցկացնել մսաղացով  
Լցնել թավայի մեջ, վրան ավելացնել 1 կգ  
շատ մանր կտրատած սոխ եւ մարմանդ  
կրակով եփել՝ կափարիչը փակած Զուր  
պետք չէ լցնել, մսի եւ սոխի բաց թողած  
ջուրը բավական է եփել մինչեւ ջրի ցանա-  
քելը, անընդհատ խառնել, որպեսզի մսի  
գնդիկներ չմնան Ավելացնել սեւ եւ կարմիր  
պղպեղ, քիմիոն, աղ, յուղ թողնել սառչի



**Վրայի միսը՝** 1 կգ փափուկ, առանց ջիլի եւ առանց յուղի միսը 2 ան-  
գամ անցկացնել մսաղացով, 3-րդ անգամ հետո աղալ 1,5 կգ թաքուլեի  
բլղուր, որպեսզի լավ ձուլվեն իրար՝ Ավելացնել կես կգ քյավառի քյուֆ-  
թա, աղ, սեւ եւ առատ կարմիր պղպեղ, քիմիոն, լավ շաղախել մինչեւ  
միատարր զանգված դառնալը

Դետո ձեռքի ափի չափով բաժանել մանր գնդերի, ձեռքը թրջել,  
յուրաքանչյուր գնդիկին՝ առանձին-առանձին, մեկ ձեռքի ափով եւ  
մյուս ձեռքի ցուցանատով զգուշությամբ, որպեսզի չծակվի, տալ  
կիտրոնի ձեւ, մեջը լցնել սառած միջուկը եւ փակել

Եփել աղ եւ տոմատի մածուկ խառնած եռացող ջրում

Կարելի է նաեւ տապակել առատ յուղի մեջ՝ ոչ շատ ուժեղ կրակով  
Մատուցել կիտրոնով

## **ՔԵՇՔԵՔ (հարիսա)**

Կաթոսայի մեջ լցնել 3-4 թեյի բաժակ կորկոտ (ձավար), վրան լցնել սառը ջուր եւ եփել 1 կգ հավի յուղոտ միսը եփել եւ ոսկրահան անել, հեռացնել նաեւ կաշին Յավի միսը եւ արգանակը լցնել ձավարի վրա, ավելացնել աղը ու կրակը մարմանդացնել Եփելու ընթացքում անընդհատ խառնել փայտե մեծ գդալով Եփել մինչեւ համասեռ զանգված դառնալը Քեշքեքը շատ հաջող է լինում, երբ շատ է խփվում փայտե գդալով եւ «թել-թել» է լինում Կրակից իջեցնելուց հետո նորից լավ հարել

Յացը կտրատել փոքրիկ քառակուսիների ծեռով, յուղի մեջ տապակել՝ մինչեւ լավ վարդագունելը, հետո հարիսան ափսեների մեջ լցնելիս՝ վրան լցնել այդ կարմրացրած հացից

Հարիսան մատուցել յուղով, քիմիոնով եւ սեւ պղպեղով

## **ՎԵՐՄԻՇԵԼՈՎ ԵՎ ԲՐՆԶՈՎ ՓԼԱՎ**

1 թ.ք. վերմիշելը յուղով լավ բովել, մինչեւ վարդագունելը Ավելացնել 2 թ.ք. բրինձ, շարունակել բովել՝ գգուշությամբ խառնելով Լցնել եռացրած ջուր կամ արգանակ, աղ, սեւ պղպեղ եւ եփել մարմանդ կրակով Երբ սկսեն ծակոտիներ առաջանալ, ուրեմն պատրաստ է Կաթոսայի վրա դնել երկտակ ծալած սրբիչ, պինդ փակել կափարիչը եւ թողնել «հանգստանա»:

1 թ.ք. վերմիշելին՝ 1թ.ք. ջուր, 1թ.ք. բրնձին՝ 2 թ.ք. ջուր.

## **ԲՐՆԶՈՎ ԵՎ ՈՍՊՈՎ ՓԼԱՎ**

1 բաժակ ոսպը եփել. Մեկ այլ կաթոսայի մեջ լցնել առատ յուղ եւ 3 բաժակ լվացված բրինձ բովել, մինչեւ բրինձը սկսի կպչել կաթոսայի հատակին Յետո լցնել 6 բաժակ եռացրած ջուր եւ եփել մարմանդ կրակով. Ավելացնել եւս կես բաժակ եռացրած ջուր, ոսպը, աղ, սեւ պղպեղ: Եփել մինչեւ պատրաստ լինելը եւ փակել սրբիչով

## **ՉԱՄՉՈՎ ՓԼԱՎ**

Յ բաժակ բրինձը յուղով լավ բովել Լցնել Յ բաժակ եռման ջուր կամ արգանակ, աղ, եփել մինչեւ սկսի ծակոտիներ առաջանալ Ծածկել սրբիչով

Մեկ բաժակ լվացած չամիչը յուղով բովել Եւ լցնել պատրաստի փլավի վրա

## **ԲԼՂՈՒՐՈՎ ՓԼԱՎ**

Յ բաժակ բլղուրը լվանալ, յուղով լավ բովել, հետո ավելացնել Յ բաժակ եռացրած ջուր կամ արգանակ, մի փոքր տոնատի մածուկ, աղացած սեւ Եւ կարմիր պղպեղ Եւ եփել մարմանդ կրակով՝ մինչեւ պատրաստ լինելը

Սոխը մանր կտրատել, յուղով սոխեռած անել Եւ լցնել պատրաստի փլավի վրա

## **ԿԱՆԱՉ ՈԼՈՌԸ ԶՎՈՎ**


Պահածոյացված կանաչ ոլոռը լվանալ, ջրքամել Յուղով Եւ մանր կտրատած սոխով սոխեռած անել, ավելացնել կտրատած լոլիկ կամ տոնատի մածուկ, նորից եփել Երբ լոլիկը պատրաստ լինի, լցնել ոլոռը, կտրատած սամիթ, սեւ պղպեղ Եւ շարունակել եփել Պատրաստ լինելուց հետո վրան հարած ձու լցնել Եւ թողնել կրակին՝ մինչեւ ձվերի եփելը

## **ԹԱԹԱՐ ԲՅՈՐԵՅԻ**

Այսուրը բլրաձեւ լցնել բասի մեջ, մեջտեղը փոս անել, մի քանի հատ ձու կոտրել, լցնել ջուր Եւ աղ Պատրաստել պինդ խմոր, գրտնակով բացել, կտրատել, եփել սովորականից մի քիչ աղի Եւ մի քանի հատ դափնու տերեւ, սեւ պղպեղ ավելացրած եռման ջրում

Մատուցել մածուն-սխտորով Եւ յուղով

# ԾԱՂԿԱԿԱՊԱՄԲԸ ԶՎՈՎ



Ծաղկակաղամբը մաքրել, լվանալ Աղաջրի մեջ թեթեւակի խաշել Զուն կոտրել խոր ափսեի մեջ, հարել՝ ավելացնելով աղ եւ կարմիր պղպեղ Ծաղկակաղամբը թաթախել ձվի մեջ եւ տապակել, մինչեւ թեթեւ վարդագունելը Տափակ սալաթամանի մեջ շարել կտրատած լոլիկ, տապակած ծաղկակաղամբները դասավորել մեջտեղում եւ վրան կտրատած մաղաղանոս շաղ տալ.

## ՔՅՈՒԹԵ (ԿՈՏԼԵՑ)

1 կգ մի փոքր յուղոտ տավարի միսը երկու անգամ անցկացնել մսաղցով, աղալ նաեւ 4-5 մեծ գլուխ սոխ, մի քանի պճեղ սխտոր, թրջված սպիտակ հացի միջուկ կամ 3-4 կարտոֆիլ Ավելացնել 2 ձու, աղ, ծիթրոն, սեւ եւ կարմիր պղպեղ, բահար, քիմիոն, չաման, կես թեյի բաժակ կաթ կամ ջուր եւ լավ հունցել Հունցելու ընթացքում մաս առ մաս վերցնել խճողակը եւ հարվածել թասիկի հատակին (կոտլետն ավելի փափուկ է ստացվում): Պատրաստել կոտլետներ եւ տապակել ոչ շատ ուժեղ կրակով

Յետք մատուցել թանձրահյութ (ոզդլիվկա). սոխը կտրատել, սոխեռած անել, ավելացնել քերիչով անցկացրած լոլիկ կամ լեզո, մի փոքր էլ եփել, հետո ավելացնել կտրատած համեմ եւ մաղաղանոս, աղ, սեւ պղպեղ եւ մատուցել առանձին ափսեով

## ՀԱԼԵՊԻ ՔՅՈՒԹԵ

Մեկ կգ տավարի փափուկ միսը եւ կես կգ խաշած կարտոֆիլը աղալ մսաղցով Ավելացնել աղ, սեւ եւ կարմիր պղպեղ, մանր կտրատած մաղաղանոս, երկու ձվի դեղնուց Այս բոլորը միասին շաղախել եւ թողնել երկու ժամ Զանգվածից կլոր գնդիկներ պատրաստել, թաթախել ձվի սպիտակուցի մեջ եւ տապակել լավ տաքացրած յուղով.

## ԼՈՒԻԿՈՎ ԶՎԱԾԵՂ

Լուիկը լայնակի կտրել, ծեթով տապակել երկու կողմից, աղ ցանել, վրան կոտրել ծվերը՝ առանց դեղնուցները վնասելու Փակել կափարիչը եւ եփել մարմանդ կրակով, մինչեւ ծվերի լրիվ եփվելը



## ՏԺՎՃԻԿ

Տավարի լյարդը (սեւ թոքը) մանր կտրատել, ծեթով տապակել վրան ավելացնել կտրատած սոխ և միասին տապակել երբ սոխն էլ պատրաստ լինի, ավելացնել կտրատած լոլիկ կամ տոմատի մածուկ, կտրատած մաղաղանոս, աղ, սեւ եւ կարմիր պղպեղ Կարելի է մատուցել եւ տաք, եւ սառը


## ՏԱՊԱԿԱԾ ԶԻՅԵՐ (սեւ թոք)

Տավարի սեւ թոքը երկայնակի կտրատել, լվանալ, վրան աղ, սեւ եւ կարմիր պղպեղ լցնել, լավ խառնել. Թողնել աղը ներծծվի, թաթախնել այսուրի մեջ եւ տապակել լավ տաքացրած ծեթով:

## ԹԱՍ ԶԵԲԱՔ

Կես կգ. ոչխարի միսը մանր-մանր կտրատել եւ եփել Յետո յուղով սոխեռած անել, ավելացնել եփված միսը, սեւ պղպեղ, աղ եւ մի քիչ էլ եփել Լցնել խորը, կլոր թասի մեջ եւ զգուշությամբ շրջել տափակ (փլավի) կաթսայի մեջտեղը, կողքերը լցնել 2 բաժակ լվացված բրինձ, ավելացնել քամած արգանակը՝ 1/2 հարաբերությամբ եւ եփել մարմանդ կրակով, մինչեւ բրնձի պատրաստ լինելը Խցեցնել կրակից, կաթսայի վրա փռել մաքուր սրբիչ եւ դնել կափարիչը

## ԴԴՄԻԿՈՎ ԿՈՏԼԵՏ



1 կգ դդմիկն անցկացնել քերիչի խոշոր կողմով Ավելացնել 1,5 թեյի բաժակ այսուր, 5 ձու, 1-ական կապ կտրատած սամիթ եւ մաղաղանոս, աղ, սել եւ կարմիր պղպեղ Զեթը լավ տաքացնել, վրան աղ ցանել եւ գդալով վերցնելով զանգվածից՝ տապակել ոչ շատ ուժեղ կրակով

## ԴԴՄԻԿԸ ՉՎՈՎ

Դդմիկը կլոր-կլոր՝ մոտ 1-1,5 սմ. հաստությամբ կտրատել, թաթախել այսուրի մեջ, երկու կողմից ձեթի մեջ տապակել Դասավորել տափակ կաթսայի կամ թափայի մեջ, վրան լցնել հարած ձու եւ եփել 5-8 րոպե Եփվելուց հետո ավելացնել մանր կտրատած սամիթ

Կարելի է մատուցել սխտոր-մածունով

## ԴԴՄԻԿՈՎ ՏՈԼՄԱ


Ընտրել ոչ բարակ դդմիկներ, բաժանել երկու մասի, զգուշությամբ հանել միջուկը, միջնապատերին աղ քսել:

Ոչխարի յուղոտ միսն աղալ դդմիկների միջուկի եւ սոխի հետ, ավելացնել բրինձ, աղ, սել եւ կարմիր պղպեղ, կտրատած սամիթ, ծիթրոն, թթվասեր, մաքրված եւ կտրատած լոլիկ, սառը ջուր, լավ խառնել եւ լցոնել դդմիկները. Եփել մարմանդ կրակով



## ԱՄԱՌԱՅԻՆ ՏՈԼՄԱ

Սմբուկի միջուկը հեռացնել, իսկ սմբուկները դնել աղաջրի մեջ Հեռացնել նաեւ կլորավուն կանաչ եւ կարմիր պղպեղների կոթունները եւ սերմները, դարձյալ դնել աղաջրի մեջ Վերցնել ոչ շատ մեծ լոլիկներ, վերևի մասից կտրել, բայց մի փոքր մասը չանջատել եւ թողնել որպես կափարիչ Թեյի գդալով հանել միջուկը եւ միջնապատերին աղ քսել Նույն ծերով պատրաստել նաեւ կանաչ խնձորները




**Միջուկը.** տավարի եւ խոզի յուղոտ միսը աղալ սոխի հետ միասին Ավելացնել բրինձ, կտրատած համեմ, լոլիկի կտրատած միջուկը, ռեհան, ծիթրոն, աղ, սեւ եւ կարմիր պղպեղ, թթվասեր, սառը ջուր Լավ խառնել եւ լցոնել բանջարեղենները եւ խնձորները Լցոնած լոլիկները դնել ամենավերեւում Եփել մարմանդ կրակով

Ընդհանրապես, տոլման շատ համեղ է ստացվում, երբ օգտագործվում է տավարի եւ խոզի յուղոտ միս

\*\*\*

Նույն միջուկով կարելի է պատրաստել նաեւ խաղողի տերեւով տոլմա, որը պետք է փաթաթել շատ մանր.



## ՍՈԽՈՎ ՏՈԼՄԱ



Ընտրել մեծ գլխով սոխեր, մաքրել եւ մտցնել եռման ջրի մեջ, մեկ-երկու րոպե խաշել եւ շերտերն զգուշությամբ առանձնացնել իրարից

Ոչխարի փափուկ միսն անցկացնել մսա- դացով, ավելացնել մանր կտրատած սոխ, մաղաղանոս, ծիթրոն, աղ, սեւ եւ կարմիր

պղպեղ Ստացված խճողակը յուղով տապակել՝ անընդհատ խառնելով Ավելացնել ծու եւ խաշված բրինձ

Ոսկրոտ միսը եփել եւ արգանակ պատրաստել

Խճողակով լցոնել սոխի շերտերը եւ դասավորել տափակ կաթսայի մեջ՝ արանքներուն դնելով նաեւ սալորաչիր Լրիվ լցոնելուց հետո վրան ափսե դնել եւ լցնել արգանակը այնքան, որ հազիվ ծածկի տոլմաները եփել մարմանդ կրակով


## ՊԱՍՈՒՑ ՏՈԼՄԱ

Մեկական թեյի բաժակ կարմիր լոբին, ոսպը, սիսեռը, բակլան լավ լվանալ, առանձին-առանձին լցնել տարբեր կաթսաների մեջ, ջուր լցնել մինչեւ ծածկվելը եւ թողնել մեկ գիշեր Առավոտյան բոլորը եփել

Մեկ կիլոգրամ սոխով եւ կես լիտր ձեթով անել սոխեռած Սոխեռածը թթեւակի կարմրելուց հետո վրան ավելացնել տոմատի մածուկ կամ լե- չո / պահածոյացված լոլիկ/, եփված լոբին, սիսեռը, ոսպը, բակլան, մեկ թեյի բաժակ լվացված բլղուր, 2-3 թեյի բաժակ տաք ջուր, կարմիր եւ սեւ պղպեղ, 1- ական կապ մանր կտրատած մաղաղանոս եւ համեմ, աղ՝ ըստ ճաշակի Տասը-տասմիինգ ռոպե եփելուց հետո իջեցնել կրակից, ավե- լացնել կես թեյի բաժակ կանեփի սերմեր եւ սալորաչիր՝ ըստ ցանկու- թյան թողնել միջուկը սառչի Սառչելուց հետո փաթաթել անպայման թթու դրած կաղամբի տերեւներով Կաղամբի տերեւները պետք է, այս- պես ասած, ձեւել, այսինքն՝ կտրատել տարբեր չափերի եւ փաթաթել այնպես, որ կողքերը բաց չմնան, որպեսզի միջուկի հատիկները դուրս չթափվեն Կարելի է փաթաթել նաեւ եռանկյունաձեւ, ըստ տանտիրուիհու նախասիրության Պետք է փաթաթել մեծ-մեծ եւ դասավորել կաթսայի մեջ Լրիվ փաթաթել վերջացնելուց հետո ավելացնել տաքացրած եւ տոմատի մածուկ խառնած ջուր, ինչպես նաեւ, դարձյալ ըստ ճաշակի, կաղամբի թթվի ջուր եփել մարմանդ կրակով

## ՅԱԼԱՆ (սուտ) ՏՈՒՄԱ

1 կգ գլուխ սոխը մանր կտրատել, առաւտ ձեթի մեջ սոխսեռած անել Երբ վարդագունի, ավելացնել տոնմատի մածուկ կամ կտրատած լոլիկ, նորից եփել՝ Ավելացնել 4 թյի բաժակ լվացած բրինձ եւ խառնելով եփել Լցնել չորացրած անանուխ, մանր կտրատած մեկական կապ մաղաղանոս եւ համեմ, սեւ եւ կարմիր պղպեղ, աղ



Լցնել 1 թ. ք բաժակ ջուր եւ թողնել մարմանդ կրակով եփվի, մինչեւ ջուրը քաշվի թողնել սառչի եւ փաթաթել խաղողի մեծ տերեւմերով՝ ափսեի կամ մսի տախտակի վրա, որպեսզի ստացվեն երկարավուն եւ բարակ տոլմաներ Շարել տափակ կաթսայի մեջ, վրան դնել շուրջ տված ափսե եւ ջուրը լցնել այնքան, որ տոլմաները ծածկվեն եփել շատ մարմանդ կրակով Մատուցել սառը

Նույն միջուկով կարելի է պատրաստել ամառային սուտ տոլմա՝ սմբուկով, պղպեղով, լոլիկով եւ դդմիկով

## ԼՑՈՆԱԾ ԿԱՐՏՈՒՖԻԼ

Ընտրել համաչափ, օվալաձեւ կարտոֆիլներ Մաքրել, զգուշությամբ հեռացնել միջուկը եւ կարտոֆիլները լցնել սառը ջրի մեջ, որպեսզի չսեւանան Պատրաստել կոտլետի խճողակ, մսի հետ աղալով նաեւ կարտոֆիլի միջուկը Լցնել կարտոֆիլները, դնել քիչ յուղ եւ պաքսիմատի փոշի ցանած թիթեղի վրա Եփել ջեռոցում՝ մինչեւ վարդագունելը

## ՅԱՎԻ ՄՍՈՎ ԿՈՏԼԵՏ

Յավը ուսկրահան անել, հեռացնել կաշին, լավ լվանալ եւ թողնել ջեռամվի Յավի միսը եւ սոխը միասին աղալ Ավելացնել կարագ, աղ, սեւ եւ կարմիր պղպեղ, լավ խառնել Տալ կոտլետի ձեւ, թաթախել պաքսիմատի փոշու մեջ եւ տապակել

## ԿԱՐՏՈՖԻԼՈՎ ԶՎԱԾԵՂ

Կարտոֆիլը աղաջրում խաշել, մաքրել կեղեւները եւ լավ տրորել Ավելացնել կարագ, աղ եւ նորից տրորել Լավ տրորելուց հետո լցնել յուղ քսած թիթեղի մեջ, տափակեցնել, շաղ տալ քերիչով անցկացրած պանիր եւ եփել ջեռոցում՝ մարմանդ կրակով Երբ երեսը թեթեւակի կարմրի, հանել ջեռոցից, ճաշի գդալի ուռուցիկ մասով փոսիկներ անել եւ այդ փոսիկների մեջ ձու կոտրել եւ նորից դնել ջեռոցը, թողնել 4-5 րոպե՝ մինչեւ ձվերը եփվեն

## ՍԻՍԵՌՈՎ ԿՈՏԼԵՏ

1 կիլոգրամ սիսեռը թրջել տաք ջրով եւ թողնել ամբողջ գիշեր Այնուհետեւ ջուրը թափել, սիսեռն աղալ մսաղացով Աղալ նաեւ 5-6 խոշոր, խաշած կարտոֆիլ, 2-3 պճեղ սիստոր Ավելացնել 1 թեյի բաժակ ալյուր, 3 ձու, աղ, սեւ եւ կարմիր պղպեղ, քիմիոն եւ շաղախել: Տալ կոտլետի ձեւ և տապակել ձեթով

## ԹՈՓԻԿ (ԳՐԵԴԱԿ)

*1 կգ սիսեռ, 1 կգ սոխ, կես կգ կարտոֆիլ, 1 թեյի բաժակ ձեթ, կըրակրած ընկույզ, անանուխ եւ թահին*

Սիսեռը տաք ջրով թրջել եւ թողնել ամբողջ գիշեր Առավոտյան թափել ջուրը, լցնել սառը ջուր եւ եփել Եփվելուց հետո թողնել սառչի եւ երկու անգամ անցկացնել մսաղացով Յետը աղալ նաեւ կարտոֆիլը

**Միջուկը՝** սոխը շատ մանր կտրատել, քիչ ջրով թեթեւակի խաշել՝ մինչեւ մի փոքր փափկի Դատարկել քամիչի մեջ, որ ջրքամվի Մի մասը լցնել աղացած սիսեռի վրա Մյուս մասի վրա՝ լավ ջրքամվելուց հետո, լցնել ձեթը, ընկույզը, աղը, անանուխը, թահինը


Վերցնել մառյաներ կամ շատ բարակ, մաքուր կտորներ, սիսեռի գանգվածից ձեռքի ափով վերցնել, մեջը լցնել միջուկը, տալ գնդի ձեւ (մոտավորապես 7 սմ. տրամագծով), մառյայով փաթաթել, վերեւի մասը կապել Ստացվում է 10-12 գունդ

Պատրաստի գնդիկները (մառյայով հանդերձ) եփել եռացրած աղաջրի մեջ՝ 40-45 րոպե. Սառչելուց հետո զգուշությամբ քանդել մառյաները, թոփիկները դասավորել ափսեների մեջ, վրան ավելացնել ձեթ եւ սեւ պղպեղ.

## ԵՐԻՇՏԱՆ

Չնայած այն բանին, որ հիմա շուկան ողողված է մակարոններնի բազմազան եւ գայթակղիչ լրեակներով, այնուամենայնիվ, լրանդիրուիու ծեռքով պարտասպած էրիշտան գերադասելի է եւ շատ համեղ

Տնային պայմաններում էրիշտան պարուսպելու եղանակը



\*\*\*

30 ձուն կոտրել թասի մեջ, հետո դատարկել մեկ այլ՝ ավելի մեծ թասի մեջ, իսկ առաջին թասի մեջ լցնել այնքան ջուր, որքան ծվերի զանգվածն էր Զրին ավելացնել աղ, որ սովորականից աղի լինի

Չվերը լավ հարել, աղաջուրը լցնել վրան, ավելացնել ալյուր, 1 թ.ք. սպիտակահատ ծավար եւ հունցել պինդ խմոր

Անել փոքր գնդեր, թողնել հանգստանա (վրան փակել մաքուր սրբիչով) Օխլավույով կամ գրտնակով բացել ոչ շատ բարակ խմորաթերթեր, ուղևետի նման փաթաթել եւ շատ սուր դանակով կտրատել (լապշայի հաստության) ու բարակ շերտով փոռել մաքուր սփռոցների վրա, որպեսզի լավ չորանա Այնուհետեւ եփել ցանկացած ձեւով

## ԵՐԻՇՏԱՆ ԴՐՅՄԱՅՈՎ ԵՎ ԼՈԼԻԿՈՎ

Երիշտան խաշել թույլ աղաջրով երբ պատրաստ լինի՝ դատարկել փլավքամիչի մեջ եւ վրան սառը ջուր լցնել

Կաթսայի մեջ յուղ լցնել: Տաքանալուց հետո ավելացնել 2-3 ճաշի գդալ լոլիկի մածուկ, խառնել, ավելացնել եփված էրիշտան Դըյնան լցնել պատրաստի էրիշտայի վրա եւ զգուշությանք խառնել Մատուցել տաք-տաք

# ԶԿՈՎ ՌԻՏԵՍՆԵՐ

## ԶԿՈՎ ՉՈՐԲԱ (Ճկնապուր)



Կաթսայի մեջ ջուր լցնել, ավելացնել աղ, չորացրած անանուխ (նանա), ձեթ եւ եռացնել եռալուց հետո լցնել նախօրոք մաքրած, լվացած եւ կտրատած ձուկը (սիգ, պնդաճակատ) եւ եփել, մինչեւ ձկան աչքերը դուրս գան կրակն անջատել եւ թողնել հանգստանա Վերեւում նկարագրված սպիտակ ապուրի ձեռով (ձու, լիմոնի աղ եւ աղ) պատրատել ձկան «սպիտակ» ապուրը

## ՏԱՊԱԿԱԾ ՉՈՒԿ

Չուկը մաքրել, կտրատել, թաթախել այսուրի մեջ եւ ձեթով երկու կողմից տապակել, մինչեւ կիսակարմիր լինելը

Տապակած ձկան համար պատրատել սոխով սալաթ. գլուխս սոխը մեջտեղից կիսել, շերտ-շերտ կտրատել, աղով լավ տրորել, լվանալ, լցնել փոքր մաղի կամ փլավքամիչի մեջ եւ թողնել ջրքանվի Այնուհետեւ քամված սոխը լցնել խոր ամանի մեջ, վրան ավելացնել աղ, կարմիր եւ սեւ պղպեղ, չորացրած անանուխ, լիմոնի աղ (ըստ ճաշակի) եւ ձեթ լցնել տապակած ձկան վրա եւ ճաշակել

## ՉՈՒԿԸ՝ ԿԱՆԱՉ ՍՈԽՈՎ

Չուկը մաքրել, լվանալ, աղ անել եւ դասավորել տափակ կաթսայի մեջ վրան լցնել առատ, կտրատած կանաչ սոխ եւ մաղաղանոս, սեւ եւ կարմիր պղպեղ, կեղեւահանած եւ շերտ-շերտ կտրատած լոլիկ կամ ջրով բացած տոնմատի մածուկ, կարագ եւ եփել, մինչեւ ճկների աչքերի «դուրս գալը»

## **ԶՈՒԿԸ ԿԱՐՏՈՖԻԼՈՎ**

Զուկը մաքրել, կտրատել մեծ կտորներով, լվանալ, աղով, սեւ եւ կարմիր պղպեղով համեմել չորս կողմից եւ թողնել մի քիչ «հանգստանա» Կարտոֆիլը մաքրել, մեջտեղից կիսել, մեկ շերտով դասավորել լայն եւ ոչ շատ խորը կաթսայի մեջ, վրան ցանել աղ, կարմիր պղպեղ. Կարտոֆիլների վրա դասավորել ձկները, վրան լցնել ջրով բացած տոմատի մածուկ կամ կտրատած լոլիկ եւ մաղադանոս: Ամենավերին շերտում դնել կտրատած կարագ եւ եփել մարմանդ կրակով Պատառաքով ստուգել, եթե կարտոֆիլները եփված են, ուրեմն պատրաստ է:

## **ԶԿՈՎ ԿՈՏԼԵՏ**

Զուկը մաքրել, հեռացնել փշերը, լվանալ, երկու անգամ անցկացնել մսաղացով Յետը աղալ նաեւ նախօրոք թրջված սպիտակ հաց կամ հում կարտոֆիլ Ավելացնել աղ, սեւ եւ կարմիր պղպեղ, քիմիոն, բահար, չաման, չորացրած ծիթրոն եւ լավ շաղախնել Տալ կոտլետի ձեւ եւ տապակել ձեթով.


## **ԶԿԱՆ ԽԱՎԻԱՐՈՎ ՊԱՇՏԵՏ**

Միգ ձկան խավիարը ( ցանկալի է մեծ հատիկներով) լավ լվանալ, թողնել ջրքամվի: Աղ ամել եւ թողնել մի գիշեր: Յետո հարիչով լավ հարել՝ հետը հարելով նաեւ նախօրոք թրջած սպիտակ (բուխանկա) հացի միջուկ՝ մինչեւ միատարր զանգված դառնալը: Ավելացնել ձեք, լիմոնի աղ եւ նորից հարել: Լցնել տափակ ափսեի մեջ, զարդարել:

# ԽՈՐՏԻԿՆԵՐ

## (նախուտեստներ)

### ՏՆԱԿԱՆ ԵՐՉԻԿ



1կգ. խոզի միսն անցկացնել մսաղցով, հետք աղալ նաեւ 1 փոքր գլուխ սխտոր, ավելացնել մանր կտրատված խոզի ճարպ, աղ, սեւ եւ կարմիր պղպեղ, ոսկրոտ մսից պատրաստված արգանակ Լավ խառնել եւ լցոնել նախօրոք պատրաստված եւ մի ծայրը ամուր թելով կապված խոզի աղիքները 10-15 սմ. լցնելուց հետո թելով կապել եւ շարունակել լցոնել երբ լրիվ լցված լինի, ծայրը լավ կապել եւ պատրաստի երշիկը տեղադրել (փաթաթված օձի ձեւով) նախօրոք յուղած ջեռոցի թիթեղի վրա Ավելացնել տաք արգանակ եւ եփել, մինչեւ ջուրը վերջանա Յետո ավելացնել խոզի ճարպ եւ եփել այնքան, որ կարմիր Յանել, տեղավորել տափակ ափսեի մեջ, ձեւավորել եւ հյուրասիրելիս կտրատել

Մատուցել տապակած կարտոֆիլի հետ.

### ՄՍՈՎ ՌՈՒԼԵՏ

2 կգ փափուկ, առանց ջիլի միսը, 2 մեծ գլուխ սխտորը երկու անգամ անցկացնել մսաղցով Ավելացնել աղ, սեւ եւ կարմիր պղպեղ, 2 հատ ձու եւ շատ լավ հունցել:

Բաժանել 2 մասի Սրբիչը թրջել, խճողակը լցնել վրան, տալ բաստումայի ձեւ, վրան եւ կողքերը քսել տոմատի մածուկի եւ թթվասերի խառնուրդ եւ եփել ջեռոցում, ոչ շատ ուժեղ կրակով՝ մինչեւ թեթեակի կարմրելը. Թողնել սառչի, կտրատել եւ մատուցել.

## ՄՍՈՎ ԵՎ ԶՎՈՎ ՌՈՒԼԵՏ

Պատրաստել մսով ռուլետի խճողակ, նորից բաժանել երկու մասի Դնել թաց սրբիչի վրա, երկու ձեռքով տափակացնել 1 սմ հաստությամբ. Վրան շարել շատ պինդ խաշած ձվեր, երկու կողմից վրա բերել եւ տալ ռուլետի ձեւ Միացման մասը լավ հարթեցնել. Վրան քսել տոնմատի մածուկի եւ թթվասերի խառնուրդ եւ եփել ջեռոցում՝ մարմանդ կրակով Մառչելուց հետո կտրատել



\*\*\*

Նույն ձեւով կարելի է պատրաստել նաև ձվածեղով՝ խաշած ձվի փոխարեն դնելով մեկ շերտ ձվածեղ

## ԲՈՒՄԲԱՐ

Ոչխարի յուղոտ աղիքները մանր աղով թեթեւակի տրորել, մաքրել եւ լավ լվանալ կտրատել 20-30 սմ երկարությամբ, բարակ փայտիկի օգնությամբ շուրջ տալ, որպեսզի յուղոտ կողմը ներսում լինի

**Միջուկը՝** մանր կտրատած գլուխ սոխով եւ յուղով սոխեռած անել, ավելացնել լվացված բրինձ, խառնել չորացրած անանուխ, սեւ եւ կարմիր պղպեղ, աղ և ավագանություն Աղիքների մի ծայրը կապել ամուր թելով եւ զգուշությամբ լցոնել՝ հաշվի առնելով, որ եփվելիս բրինձը մեծանալու, աճելու է 7-8 սմ լցնելուց հետո նորից թելով կապել եւ շարունակել լցնել. Վերջում կապել ծայրերը եւ ասեղով մի քանի տեղից ծակծկել Աղիքները լցոնելուց հետո դնել կաթսայի մեջ, լցնել ջուրը (1 բաժակ բրնձին 2 բաժակ ջուր) եւ դնել կրակին եփվի Զուրը ներծծվելուց հետո՝ թողնել դուրս տված յուղով տապակվի. Երբ սկսի կարմրել՝ ուրեմն պատրաստ է

Նույն ձեւով կարելի է լցոնել նաև փայծաղը. Վերցնել ոչխարի 7-8 փայծաղ, լավ լվանալ Յաստ մասից սուր դանակով մի փոքր կտրել, որպեսզի հնարավոր լինի երեք մատով դուրս բերել միջի մակարդված արյունը Լցնել բրնձով միջուկը եւ կարել եփել բումբարի նման.

## ՍԵՎ ԹՈԹՈՎ ՌՈՒԼԵՏ

Մեկ կգ տավարի սեւ թոքը, մեկ միջին չափի ստեպոհինը (գազարը), 2 մեծ գլուխ սոխը դնել կաթսայի մեջ եւ քիչ ջրով շոգեխաշել՝ ավելացնելով նաեւ աղ, աղացած սեւ պղպեղ, 2-3 հատ դափնու տերեւ. Եփվելուց հետո համել դափնու տերեւը, մնացածն անցկացնել մսաղացով, ավելացնել մանր կտրատած մաղադանոս եւ 50 գրամ կոնյակ կամ օղի. Լավ խառնել Դնել պոլիէթիլենային թաղանթի (ցելոֆան) վրա, բացել միատարր զանգվածը, վրան քսել 100 գրամ կարագ եւ զգուշությամբ փաթաթելով՝ տալ ռուլետի ծեւ. Հանել պոլիէթիլենային թաղանթից, դնել խոհանոցային տախտակի կամ տափակ ափսեի մեջ եւ դնել սառնարանում. Երբ սառչի, կտրատել եւ մատուցել որպես սառը խորտիկ.

## ՍՈՒՉՈՒԻՆ

Առանց ջիլի, ոչ շատ յուղոտ տավարի միսը լավ լվանալ, թողնել ջրքամվի. Երկու անգամ անցկացնել մսաղացով եւ լցնել մեծ, էմալապատ թասի մեջ Ավելացնել աղ, սեւ պղպեղ, քիմիոն, քիչ կարմիր պղպեղ, բահար, մսաղացով անցկացրած սխտոր եւ ձեռքերն անընդհատ ջրի մեջ թաթախելով՝ լավ հունցել.

Համոզված լինելու համար, որ համեմունքները տեղին են, այդ խճողակից (ֆարա) վերցնել, տալ կոտլետի ծեւ եւ տապակել.

Հետո գնդեր անել եւ թողնել

Հանել մսաղացի դանակը եւ ցանցը, սուջուխի համար նախատեսված ծագարը տեղադրել մսաղացին ու արդեն նշակված եւ պատրաստի աղիքի մի ծայրը անուր թելով կապել, իսկ մյուս ծայրը հագցնել մսաղացից դուրս գտնվող ծագարի ծայրին եւ մսի մեքենայի օգնությամբ առիջը լցոնել պատրաստի խճողակով եւ 30-40 սմ լցվելուց հետո՝ երկրորդ ծայրն էլ կապել ու տալ պայտի ծեւ եւ երկու ծայրերը կապել իրար եվ այդպես, մինչեւ ամբողջ խճողակն սպառվի. Հետո լցոնած աղիքները մի քանի տեղից վերմակի ասեղով ծակծկել եւ 2-3 օր կախել արեւի տակ Հանել, գրտնակել եւ նորից կախել Կրկնել 2-3 օր եւ կախել մինչեւ չորանալը.

## ԲԱՍՏՈՒՐՄԱ


10 կգ տավարի ֆիլե, 700 գր մաքրած սխտոր, 1 կգ աղ, կես կգ չանան Յամենունքներն ըստ ճաշակի

Ֆիլեի ջիլերը եւ ավելորդ մասերը հեռացնելուց հետո տալ ձկան ձեւ՝ 12 սմ լայնությամբ, 6 սմ հաստությամբ, 20-30 սմ երկարությամբ

Դանակով ծակծկել, հետո լավ աղ ամել, դնել այնպիսի մնջ թասի մեջ, որ միսը չծալծլվի, տեսքից չընկնի թասը դնել թեքությամբ, որպեսզի արնաջրերը հոսեն երեք-չորս օր հետո մսի կտորները շուր տալ եւ այն մասերում, որտեղ աղ չկա՝ ավելացնել եւ նորից թողնել 3-4 օր Յետո հանել, շատ լավ լվանալ հոսող ջրի տակ Վերեւի մասից դանակով ծակել եւ ամուր թել անցկացնել ու 10 օր կախել արեւի տակ Այնուհետեւ հանել եւ դնել մաքուր կտորի վրա եւ յուրաքանչյուր շերտի արանքում անպայման դնել կտոր Վրան դնել տափակ, մեծ խոհանոցային տախտակ, իսկ տախտակի վրա՝ ծանրություն թողնել մի քանի օր, հանել եւ յուրաքանչյուր ֆիլեի վրա քսել առատ, ներքոհիշյալ ձեւով պատրաստված չամանի մածուկ եւ կախել

## Չաման

Չամանը բովել, աղալ երեկոյան վրան լցնել գոլ ջուր, որ մի քանի մատ բարձր լինի, մի քանի անգամ գդալով խառնել Թողնել ամբողջ գիշեր Առավոտյան զգուշությամբ թափել վրայի դառը ջուրը Ավելացնել աղ, սեւ պղպեղ, առատ կարմիր պղպեղ, ճզմած սխտոր, քիմիոն, բահար եւ լավ խառնել



# ՈՒՏԵԱՏՆԵՐ ՈՒՂԵՂՈՎ

Մեկ կգ տավարի ուղեղը կես ժամ թողնել սառը ջրի մեջ Յետո զգուշությամբ հեռացնել թաղանթը Լցնել կաթսայի մեջ, ավելացնել 2-3 բաժակ ջուր, մեկ մաքրած ամբողջական ստեպիդին (գագար), աղ, աղացած սեւ պղպեղ եւ եփել. Յանել կաթսայից, լավ տրորել, ավելացնել 3-4 հատ խաշած խոչոր կարտոֆիլ, իրար հետ լավ տրորել, ավելացնել մի փոքր յուղ, կոտրել երկու ձու, նորից լավ խառնել Պատրաստել կոտլետներ, թաթախել ալյուրի մեջ եւ տապակել

\*\*\*

Ուղեղը մաքրել, լցնել կաթսայի մեջ եւ ավելացնել այնքան ջուր, որ ուղեղը ծածկվի, մի քանի դափնու տերեւ, 1-2 ճաշի գոյալ քացախ, 5-6 հատ սեւ պղպեղի հատիկներ երբ սկսի եռալ, կրակը մարմանդացնել եւ եփել 10-15 րոպե Յետո հանել, ջրքամել, յուրաքանչյուր ուղեղը բաժանել երկու մասի, վրան աղ եւ կարմիր պղպեղ ցանել, թաթախել ալյուրի մեջ եւ տապակել Մատուցել կիտրոնով

\*\*\*

500 գրամ ուղեղի թաղանթը հեռացնել, լվանալ, թեթեւակի խաշել Յետո մանր կտրատել, վրան ավելացնել ծեծած պարսիմատ եւ տապակել Մատուցելիս վրան լցնել մանր կտրատած համեմ, ցանկության դեպքում, նաեւ՝ կիտրոնի հյութ.

\*\*\*


Ուղեղը մաքրել, խաշել Պատրաստ լինելուց հետո լավ տրորել, ավելացնել սեւ եւ կարմիր պղպեղ, ըստ ճաշակի կիտրոնի հյութ կամ ջրի մեջ լուծված լիմոնի աղ. Մատուցել սառը

# ԱՂՑԱՆԵՐ

## ԹԱԲՈՒԼԵ

Կես կգ բլղուրը լցնել էմալապատ թասի մեջ, ավելացնել 2 թեյի բաժակ եռացրած ջուր, կափարիչով փակել եւ թողնել հանգստանա 1 ժամ՝ մինչեւ բլղուրը լավ ուռչի Այնուհետեւ ավելացնել աղ, 4-5 ճաշի գդալ տոմատի մածուկ, չորացրած անանուխ, կարմիր եւ սեւ պղպեղ, 1 կգ շատ մանր կտրատած գլուխ սոխ, մանր կտրատած 2-ական կապ մաղաղանոս ու կանաչ սոխ, մաքրված եւ մանր կտրատած լոլիկ, ձեթ եւ լիմոնի աղ եթե թարուլեն պատրաստվում է հազարի (մառովի) սեղոնին, կարելի է եւ շատ մանր կտրատած հազար ավելացնել

Մատուցելիս սալաթամանի կողքերը գեղեցիկ դասավորել հազարի թերթիկները եւ բրգածել լցնել թարուլեն թարուլեի հետ մատուցել սառը թան կամ տոմատի հյութ



## ՔԱՄԱԾ ՄԱԾՈՒՆՉ ՀԱՎԻ ՄՍՈՎ

2-3 կգ մածունը քամել Հավը լավ եփել, հետո թել-թել բաժանել մասերի Քամած մածունի վրա ավելացնել մեկ բաժակ թթվասեր, ճղմած սխտոր, կտրատած ընկույզ, թել-թել արված հավի միսը եւ կարմիր պղպեղ Լցնել պիհալաների մեջ, զարդարել եւ մատուցել

## ԱՄԱՌԱՅԻՆ ՍԱԼԱԹ

Վարունգը լվանալ, կտրատել լայն թասի մեջ, վրան կտրատել լոլիկ, քաղցր եւ կծու պղպեղ, ռեհան, կտրատած, աղով ճղմած եւ լվացած սոխ, աղ, ձեթ եւ թթվասեր Լավ խառնել եւ մատուցել

## ԱԳԱՐԻԿՈՆՈՎ (շամպինյոն)



Սունկը աղով խաշել, մանր կտրատել Ավելացնել աղ, սեւ եւ կարմիր պղպեղ, ձեթ, մանր կտրատած մաղաղանոս, լիմոնի աղ եւ դասավորել սալաթամանների մեջ

### ՍՄԲՈՒԿԸ ԸՆԿՈՒՅՉՈՎ

Սմբուկը մաքրել չորս տեղից եւ 1 սմ հաստությամբ (Երկարությամբ) կտրել, աղ անել եւ դնել մաքուր սրբիչի վրա Ձեթով երկու կողմից տապակել եւ դնել փլավքամիջի մեջ, որ ձեթը լավ քանվի

**Միջուկը՝** ընկույզը մանր կտրատել, ավելացնել ճգնած սխտոր, մանր կտրատած մաղաղանոս, սունելի, աղ, թթվասեր Լավ խառնել.

Մեկ-մեկ վերցնել տապակած սմբուկները, փոքր գդալով վրան դնել միջուկից, փաթաթել եւ Երկարությամբ դասավորել փոքր եւ ոչ շատ խորը սալաթամանների մեջ

### ԿԱՆԱՉ ԼՈԲՈՎ

Լորին մաքրել, լվանալ, խաշել՝ թույլ աղաջրով Եփիվելուց հետո դասավորել տափակ ափսեների մեջ Վրան ավելացնել կարմիր պղպեղ, ճգնած սխտոր, կտրատած ընկույզ, սամիթ եւ քացախ.

### ԾԱՂԿԱԿԱՌԱՄԲՈՎ


Ծաղկակաղամբն առանձնացնել, լվանալ, թույլ աղաջրով խաշել կտրատել, վրան ավելացնել աղ, կարմիր պղպեղ, կտրատած համեմ, լիմոնի աղ, ձեթ եւ լավ խառնել

### ԲԱԶՈՒԿՈՎ

Խաշած բազուկը անցկացնել քերիչի մեջ կողմով Ավելացնել կտրատած ընկույզ, ճգնած սխտոր, աղ, սեւ եւ կարմիր պղպեղ, մանր կտրատած մաղաղանոս, թթվասեր եւ լավ խառնել

## ՏՈՐԹ-ՍԱԼԱԹ


Առանձին - առանձին խաշել ստեպղինը, բազուկը, կարտոֆիլը. Թույլ աղաջրով. Խաշել նաեւ ծվերը Այս բոլորը անցկացնել քերիչի խոշոր կողմով եւ դնել տարբեր թասերի մեջ. Թթու կամ մարինացված վարունգը նույնպես անցկացնել քերիչով. Ստեպղինի եւ կարտոֆիլի վրա ըստ ճաշակի ծեթ լցնել.



Լայն սալաթամանի մեջ լցնել կտրատած մաղաղանոս եւ կանաչ սոխ, վրան մի շերտ ստեպղին, հետո վարունգ, կարտոֆիլ, ծու: Ամենավերջին՝ վերեւի շերտում լցնել բազուկը Վրան լցնել թթվասեր եւ կանաչիով զարդարել.

## ՉԱՄՈՒՍ

1 կգ սիսեռի վրա լցնել գոլ ջուր, որ սիսեռից 5-6 մատ բարձր լինի Զրի մեջ ավելացնել մեկ կերակրի գդալ սոդա Թողնել մնա ամբողջ գիշեր Յաջորդ օրը քամել, լվանալ, կեղեւահանել եւ լցնել այնքան ջուր, որ եփվելուց հետո կաթսայի մեջ մոտ մեկ բաժակ ջուր մնա Եթե ջուրը քիչ է, ավելացնել տաք ջուր Լավ եփված սիսեռը աղալ մսաղացով, այնուհետեւ՝ անցկացնել մաղով Վրան ավելացնել սիսեռը խաշած ջուրը, լավ հարել, ավելացնել 2 մեծ գլուխ ճզմած եւ մաղով անցկացրած սիստոր, լիմոնի աղ կամ կիտրոնի հյութ՝ ըստ ճաշակի, կես թեյի բաժակ ծիթապտղի կամ եգիպտացորենի ծեթ, մեկ գինու բաժակ թահին (քուն-ջութից պատրաստված համեմունք, որը վաճառվում է խանութներում), քիմիոն եւ աղ, դարձյալ լավ խառնել. Միատարր զանգված դառնալուց հետո դասավորել տափակ ափսեների մեջ, պատառաքաղով գծեր քաշել, վրան մի փոքր ծեթ ցողել, զարդարել կտրատած ծիթապտղի կտորներով կամ նուան հատիկներով.



## ՍԿՈՐԴԱԼՅԱ

Կարտոֆիլը մաքրել, խաշել Յարիչով լավ հարել, ավելացնել ճղմած սխտոր, աղ, ծեթ, լիմոնի աղ, նորից լավ հարել, մինչեւ միատարր զանգված դառնալը: Լցնել տափակ ափսեների մեջ, զարդարել եւ մատուցել

## ԿԱՐՏՈՖԻԼՈՎ ՓՅԱՉ (սալաթ)

Կարտոֆիլը լավ լվանալ, խաշել Պատրաստ լինելուց հետո վրան սառը ջուր լցնել եւ մաքրել

Զեւավոր դանակով գեղեցիկ կտրատել, լցնել թասի մեջ, ավելացնել կտրատած, աղով ճղմված եւ լվացած սոխ, չորացրած անանուխ, սեւ եւ կարմիր պղպեղ, ըստ ճաշակի՝ կտրատած լոլիկ կամ տոմատի մածուկ, կտրատած համեն, մաղաղանոս, աղ, ծեթ եւ ջրով բացած լիմոնի աղ Հավ խառնել եւ լցնել սալաթամանի մեջ



## ՌԱԴԻԿԱՑՈՎ (խատուտիկ, օդувանчик)

Ռադիկյան մաքրել, լավ լվանալ, թեթեւակի խաշել Դնել սալաթամանի մեջ, կտրատել, ավելացնել լիմոնի աղ, ծեթ եւ աղ

## ՍՊԻՏԱԿ ԼՈԲՈՎ ՓՅԱՉ

Սպիտակ լոբին գիշերը թրջել, առավոտյան ջուրը թափել, նոր ջուր լցնել եւ դնել եփվի Հավ եփվելուց հետո ջուրը քամել, լցնել էնալապատ թասի մեջ, վրան ավելացնել սալաթի համար կտրատած, աղով տրորած, լվացված եւ ջրբամված սոխը, կարմիր եւ սեւ պղպեղ, քիմիոն, քացախ, աղ, կտրատած մաղաղանոս, ծեթ եւ լավ խառնել

## **ԿԱՆԱՉ ՈԼՈՇՈՎ**

Պահածոյացված ոլոռը դատարկել փլավքամիջի մեջ, վրան ջուր լցնել, թողնել ջրքամվի եւ լցնել խոր ամանի մեջ Սոխը կտրատել սալաթի ձեւով, աղով ճնոել, լվանալ՝ լցնել ոլոռի վրա Ավելացնել նաեւ մանր կտրատած համեմ, մաղաղանոս, աղ, կարմիր եւ սեւ պղպեղ, ձեթ եւ լիմոնի աղ Լավ խառնել, լցնել աղցանամանի մեջ

## **ՆԵԽՈՒՐՈՎ (քյարավուզ)**

Ընտրել մատղաշ, սպիտակ կոթուններով նեխուր Լավ լվանալուց հետո մտցնել եռման աղաջրի մեջ, թողնել 1-2 րոպե եւ համել Սառչելուց հետո մանր կտրատել, ավելացնել կտրատած լոլիկ կամ լոլիկի մածուկ, կարմիր պղպեղ, լիմոնի աղ, ճգնած սխտոր, ձեթ եւ լավ խառնել

## **ՄԱՌՈՒՇՈՎ (հազարով)**

Մառոլի թերթիկները անջատել, հոսող ջրով լավ լվանալ, կտրատել Ավելացնել մանր կտրատած ամսական (կարմիր) թողկ, կանաչ սոխ, մաղաղանոս, աղ, լիմոնի աղ, աղցանած կարմիր պղպեղ եւ ձեթ

## **ԲՈՂԿՈՎ**


Բողկը մաքրել, անցկացնել քերիչի խոշոր կողմով, վրան ավելացնել աղ, սեւ պղպեղ, լիմոնի աղ, ձեթ

Համեմունքներն ավելացնել մատուցելուց մի քանի րոպե առաջ, որպեսզի հյութը շատ դուրս չտա.

## **ԿԱՂԱՄԲՈՎ**

Կաղամբը շատ բարակ կտրատել Ստեպոհինը (գազարը) անցկացնել քերիչի խոշոր կողմով, լցնել կաղամբի վրա Ավելացնել մանր կտրատած համեմ, սամիթ, աղ, աղցանած կարմիր պղպեղ, լիմոնի աղ, ձեթ եւ լավ խառնել

# ՍՏԵՊՈՒՆՈՎ (գազարով)



Ստեպունով մաքրել, անցկացնել քերիչի մեջ կողմով, դնել խոր ամանի մեջ Ավելացնել աղ, ճզմած սխտոր, քացախ եւ թթվասեր Լավ խառնել Լցնել պիալայի մեջ՝ բրգածեւ, վրան լցնել շատ պինդ խաշած ու տրորած ձվի դեղնուցի եւ կաթնասերի խառնուրդ: Կանաչիով ու նռան հատիկներով զարդարել

## ԶՎՈՎ

6 ձուն պինդ խաշել Աղցանի ափսեի մեջ մանր կտրատել համեմ, մաղաղանոս, կլոր-կլոր կտրատած գլուխ սոխ եւ վերջում կլոր-կլոր կտրատած ձուն եւ աղը Նույն հերթականությամբ կրկնել երկու անգամ, մինչեւ սալաթամանը լցվի Վերեւի շերտին լցնել մայոնեզ եւ ձեւավորել

## ՍԱՑԻՎԻ

1-1,5 կգ. հավը լավ եփել՝ մինչեւ քրքրվի եւ կաթսայի մեջ մնա մոտ 2 թ.բ. արգանակ. Սառը վիճակում մանր կտրատել

Վերցնել 2 բաժակ մաքրած ընկույզ, 2 անգամ աղալ մսաղացով 2 պճեղ սխտորը ճզմել, աղալ թեթեւակի բոված կես թեյի գոյալ համեմի սերմ, մանր կտրատած համեմ, 1 ճ. գ. քացախ, աղ Ավելացնել հավի քրքրված միսը, 2 բաժակ հավի արգանակը եւ լավ խառնել, մինչեւ միատարր զանգված դառնալը.

## ԶԱՋԸԽ (մածնափրթոշ)


Մածունով լավ հարել, ավելացնել ջուր, նորից խառնել Վարունգը մանր-մանր կտրատել, լցնել թանի վրա, ավելացնել կտրատած կարմիր լոլիկ, ճզմած սխտոր, մանր կտրատած սամիթ, աղ:

Մատուցել սառույցով:

# ՔԱՂՑՐԱՎԵՆԻՔ


## ՂՈՒՐԱԲԻԵ (շաքարլոխում)

3 տուփի մարգարինը կամ կարագը կաթսայի մեջ հալեցնել, բայց չեռացնել թողնել լավ սառչի: Մի քանի տեղից ծակծկել եւ թափել պատրի ջուրը Լավ հարել, ավելացնել 1 թ. բ. շաքարի փոշի, 1 ձու, քացախով քացած կես թեյի գդալ՝սոդա, մի պտղունց աղ, դարձյալ հարել Ալյուրն ավելացնել այնքան, որ խմորը լինի ականջի բլթակի պնդության: Անել մի քանի գունդ եւ վրան փակել մաքուր սրբիչով Վերցնել գնդերից մեկը, ծեռքերով լավ տափակեցնել՝ մոտ 1 սմ հաստությամբ Եթե խմորեղեն կտրատելու համապատասխան ծեւավոր կաղապարներ (սիրտ, ծաղիկ, աստղ եւ այլն) կան՝ կտրատել, իսկ եթե չկան, քաժակով կտրատել, ծեւավորել (կարելի է փոքրիկ գնդեր անել, միացնել, կստացվեն ծաղիկներ եւ դասավորել զեռոց թիթեղի վրա որոշ հեռավորությամբ, որովհետեւ եփվելիս ուռչում, մեծանում են եփել նախօրոք տաքացրած եւ մարմանդ կրակով թեթեւակի վարդագունելուց հետո հանել եւ սառչելուց հետո փոքրիկ մաղով վրան շաքարի փոշի շաղ տալ



## ՇԱՄԱԼԻ

4 ձուն 2 թ.բ. շաքարավագի հետ հարել Ավելացնել 1 թ.գ. սոդա խառնած 1 կգ մածուն, 150 գր. կարագ կամ մարգարին, 2 ճաշի գդալ ալյուր, վանիլ կամ դարչին, 1 կգ սպիտակահատ ծավար (մահայ կրոպա) եւ լավ խառնել Լցնել յուղ քսած թիթեղի մեջ եւ եփել նախօրոք տաքացրած, մարմանդ զեռոցում եփել մինչեւ թեթեւակի վարդագունելը Պատրաստ լինելը ստուգելու համար վերցնել լուցկու հատիկ եւ մտցնել եփված խմորի մեջ: Եթե լուցկու հատիկը չոր է մնում, ուրեմն եփված է



**Շաքարաջուրը՝** 1 լ. ջուրը եւ 1կգ շաքարավագը եռացնել, ավելացնել կես թեյի գդալ լիմոնի աղ Շաքարաջուրը լցնել եփված խմորի վրա, հետո փախլավայածել կտրատել եւ թողնել, որ շաքարաջուրը լավ ներծծվի

**Շաքարաջրով խմորեղին պատրաստելիս պեսքը է հիշել՝ անպայման մեկը  
(կամ շաքարաջուրը, կամ՝ խմորը) պիկի լինի սառը, մյուսը՝ դար**

## **ՖԻՆԻԿՅԱՆ**


**ԽՄՈՐԾ՝** 200 գրամ յուղ, 1 շիշ «Զերմուկ» (կես լիտր), 1 թեյի գրալ սողա, 6 մանդարինի հյութ, 1 գինու բաժակ օղի կամ կոնյակ, 15-20 հատ ծեծած մեխակ, դարչին: Ավելացնել այսուր եւ պատրաստել այնպիսի խմոր, որ ձեռքերին չկաչի Բացել ոչ շատ հաստ եւ ոչ էլ բարակ, կտրատել կլորավուն՝ թեյի մեծ, լայն գավաթով

**ՇաքարաջուրԾ՝** 1լ. ջուրը եւ 1,5 կգ. շաքարավազը լավ եռացնել, թողնել սառչի

**ՄԻՋՈՒԿԾ՝** 1,5-2 բաժակ ծեծած ընկույզ, մանր կտրատած 6 մանդարինի կեղեւ, մի քիչ դարչին եւ 2 ճ.գ. շաքարավազ

Պատրաստի միջուկը լցնել բացած թերթերի մեջտեղը, երեք կողմից խմորը բերել իրար վրա (ստացվում է եռանկյունի): Վերմակի ասեղով մի քանի տեղից ծակծկել եւ եփել ջեռոցում երբ վարդագունի՝ հանել ու տաք-տաք գցել սառը շաքարաջրի մեջ եւ թողնել մի քանի ժամ

## **ԹՈՒԼՈՒՄԲԱ**



1 լ. ջուրը եռացնել 1ճ.գ. ձեթի հետ, ավելացնել 100 գր. յուղ, 1 ճ.գ. շաքարավազ, քիչ վանիլին եւ քացախով բացած սողա Այս թուլորը եռացնել եւ առանց կրակից վերցնելու, ավելացնել 600 գր. այսուր՝ անընդհատ խառնելով Յետո թողնել սառչի 10 ծուն մեկ առ մեկ խառնել խմորին

Քիչ-քիչ լցնել թուլումբայի համար նախատեսված գործիքի կամ հաստ կտորից կարված տոպրակի մեջ, սեղմելով ստանալ 8-10 սմ երկարությամբ խմոր եւ տապակել լավ տաքացրած առատ ձեթի մեջ. Երբ կարմրի՝ հանել եւ լցնել շաքարաջրի մեջ, թողնել 5-10 րոպե

**ՇաքարաջուրԾ՝** 2 կգ. շաքարավազը և 1լ. ջուրը լավ եփել, ավելացնել 1 փաթեթ վանիլին եւ լիմոնի աղ

## ՓԱԽԱՎԱ

1 ձուն հարել, ավելացնել կես լիտր գոլ ջուր, 1ճ.գ. յուղ, մի պտղունց աղ, հարել: Եցնել 1 կգ այսուր Պատրաստել ոչ շատ պինդ խմոր եւ թողնել հանգստանա 1-2 ժամ

Անել 21 գունդ եւ յուրաքանչյուր գունդը օխլավույով շատ բարակ բացել, որ դառնա թափանցիկ խմորաթերթերը բացելիս օգտագործել սովորական եւ կարտոֆիլի այսուրի խառնուրդ Բացել 10 խմորաթերթ, դնել իրար վրա, կողքերից կտրատել ավելորդ մասերը, թիթեղը լավ յուղել եւ ծեւված թերթերը դնել թիթեղի վրա Տասներորդ շերտի վրա լցնել ծեծած եւ դարչին խառնած ընկույզ Բացել եւս 10 խմորաթերթ եւ դնել մնացած ընկույզի շերտի վրա եւ նորից ընկույզ լցնել Բացել 21-րդ թերթը եւ դնել վրան Յետր կտրատել փախլավայածեւ: 800-900 գրամ յուղը լավ տաքացնել, գդալով լցնել կտրատած խմորեղենի վրա եւ 10-15 րոպե եփել շատ տաք ջեռոցում, այնուհետեւ եփել 1 ժամ՝ արդեն ոչ շատ տաք ջեռոցում:

**Շաքարաջուրը՝ 2** կգ շաքարավագը եւ 1 լիտր ջուրը եռացնել Յետո ավելացնել կես թեյի գդալ լիմոնի աղ՝ 1-2 րոպե եռացնել եւ լցնել սառը խմորի վրա.

## ԴԱԴԱԻՖ

Վերցնել դադահֆի համար պատրաստի (վերմիշելածեւ) խմորը, փռել թիթեղի վրա, վրան լցնել ծեծած ընկույզի եւ դարչինի խառնուրդ, հետո դնել երկրորդ շերտը.

Վրան լցնել լավ տաքացրած հալած յուղ եւ եփել նախօրոք տաքացրած եւ մարմանդ ջեռոցում՝ մինչեւ վարդագունելը: Կտրատել եւ թողնել սառչի: Յետո վրան լցնել տաք շաքարաջուր.

Ցանկության դեպքում, կարելի է նաեւ 10-12 սմ երկարությամբ հատիատ փաթաթել.

**Շաքարաջուրը՝ 1** կգ շաքարավագը նաեւ կես լիտր ջուրը եփել, երբ հասնի եռման աստիճանի՝ գդալի ծայրով ավելացնել լիմոնի աղ եւ եռացնել եւս մեկ րոպե

## ԹԹԻՆՄՈՐՈՎ ԲՈՒԼԿԻ

2,5 բաժակ գոլ կաթի մեջ բացել 50 գրամ խմորիչ (դրոժ), ավելացնել 3-4 ճաշի գդալ ալյուր եւ թողնել մոտ 30-40 րոպե՝ մինչեւ խմորը բարձրանա

Առանձին թասի մեջ 3 ձուն 1 բաժակ շաքարավագի հետ հարել, ավելացնել վանիլին, մի պտղունց աղ, 4 ճաշի գդալ ձեթ Լավ խառնել, ավելացնել նախապատրաստած թթվամորը, 6 թ.ք. ալյուր, 1 թ.ք.՝ նախապես վրան ալյուր ցանած չամիչ Լավ շաղախելուց հետո խմորը դնել տաք տեղ եւ թողնել 3-4 ժամ, որ բարձրանա

Խմորը բաժանել գնդերի, ձեւավորել, շարել թիթեղի վրա, վրան ձուք քսել, թողնել մի քանի րոպե եւ թխել նախապես տաքացրած, ոչ շատ ուժեղ վառվող ջեռոցում

## ՍԱՐԸ (ՉԵԿ) ԲՈՒԼԿԱ

3 ձուն լավ հարել, ավելացնել 1,5 բաժակ գոլ յուղ, 1 պտղունց աղ, 1,5 բաժակ եռացրած գոլ կաթ, 3 ափ ձեթ, ինչքան վերցնի՝ ալյուր խմորը հունցելիս ձեթը խառնել աստիճանաբար եւ ոչ թե 3 ափը միանգամից խմորը լավ շաղախել եւ եփել Բաժանել 18 գնդի եւ թողնել 2-3 ժամ հանգստանա Այնուհետեւ օխլավույով բացել շատ բարակ խմորաթերթեր Մեկ շերտի վրա քսել յուղ, վրան դնել բացված 2-րդ խմորաթերթը եւ վրան լցնել դարչին խառնած կտրատած ընկույզ, փաթաթել օխլավուի վրա եւ երկու կողմից սեղմել դեպի մեջտեղ, որպեսզի խմորը «ճնրթվի»

Զգուշությամբ հանել օխլավուի վրայից, դնել ջեռոցի թիթեղի վրա, կտրատել եւ վրան գդալով լցնել լավ տաքացրած յուղ եփել նախօրոք տաքացրած եւ մարմանդ ջեռոցում՝ մինչեւ թեթեւակի վարդագունելը, հանել եւ լցնել շաքարաջրի մեջ

**Շաքարաջուրը՝** 1,5 կիլոգրամ շաքարավագը եւ 750 գրամ ջուրը 10-15 րոպե եփել, ավելացնել կես թեյի գդալ լիմոնի աղ

## **ՓԱՓԻՈՆ (թիթեռնիկ)**

5 ձուն կոտրել թասի մեջ, հարել, ավելացնել այնքան ալյուր, որ ստացվի ձեռքերին չկպչող խմոր

Գրտնակով բացել, կտրատել երկար ժապավենի նման, տալ տարբեր ձեւեր, տապակել առատ եւ լավ տաքացրած ձեթի մեջ Երբ վարդագունի, հանել եւ վրան շաքարի փոշի շաղ տալ

## **ՀԱՆԾՍԻ ՊՈՐՏ**

2 ձուն հարել, ավելացնել 100 գրամ կարագ, 200 գր. թթվասեր, մի պտղունց աղ, որքան տանի՝ ալյուր, որ լինի ականջի բլթակի պնդության խմոր եւ չկպչի ձեռքերին

Խմորը լավ հունցելուց հետո անել 16 գունդ եւ թողնել 2-3 ժամ հանգստանա խմորը բացել շատ բարակ, վրան յուղ քսել եւ բացված խմորաթերթը բաժանել երկու մասի Առանձին-առանձին, կլոր կողմից փաթաթել օխլավուի վրա՝ կտրված մասից թողնելով 2 սմ-ի չափով, երկու ծայրերից սեղմել դեպի մեջտեղ եւ զգուշությամբ հանել օխլավուի վրայից Երկու ծայրերը միացնել իրար եւ թողնված 2 սմ խմորը դարձնել հատակ Եփել մարմանդ կրակով, հետո տաք-տաք լցնել սակը շաքարաջրի մեջ, թողնել 10-15 րոպե, հանել եւ փոսիկի մեջ լցնել դարչինի եւ ծեծած ընկույզի խառնուրդ

## **ՓՔԱԲԼԻԹ-ՕՂԱԿ**

**3 ձու, կես կգ. մածուն, 1 թեյի գդալ սոդա, ալյուր, շաքարի փոշի:**

Չուն հարել, լցնել մածունը սոդան լավ խառնելուց հետո, նորից խառնել. Լցնել ալյուր այնքան, որ ստացվի ծորուն խմոր. Փքաբլիթի համար նախատեսված շերեփը մտցնել նախօրոք տաքացրած ձեթի մեջ, հետո այդ շերեփով վերցնել թույլ խմորից եւ մտցնել ձեթի մեջ: Խմորն անմիջապես անջատվում է շերեփից ստանալով օղակի տեսք. Այդպես, մեկ առ մեկ լցնել, մինչեւ խմորը վերցանա. Թողնել մի փոքր վարդագունի եւ հանել. Լրիվ տապակելուց հետո խմորե օղակների վրա շաքարի փոշի շաղ տալ:

## ԵԿԼԵՌ

Եմալապատ ամանի մեջ լցնել 1 բաժակ սառը ջուր, 100 գր կարագ, 2 թ գ շաքարավազ, դնել կրակին եւ եռացնել՝ անընդհատ խառնելով իջեցնել կրակից, վրան լցնել 1 բաժակ առաջին տեսակի այսուր, խառնել մեծ արագությամբ, նորից դնել մարմանդ կրակին եւ մոտ 5 րոպե, արագ-արագ գդալով հունցել, ոչ թե խառնելով, այլ գդալի ուռուցիկ մասով սեղմելով խմորը, շուր տալ՝ նորց սեղմել, մինչեւ մի փոքր բովածի հոտ զգացվի իջեցնել կրակից, թողնել մի քիչ սառչի, այնքան, որ մատը դիմանա ջերմությանը եւ 6 ծուն մեկ առ մեկ կոտրել եւ աստիճանաբար խառնել խմորին

Ստացված խմորից ճաշի գդալով վերցնել եւ դնել ջեռոցի սառը թիթեղի վրա Դնելիս խմորն իսկույն չի անջատվում գդալից Դրա համար իջնող խմորը պտտեցնել այնպես, որ բրգաձեւ նստի թիթեղի վրա Դասավորել միմյանցից հեռու, որպեսզի եփվելուց հետո չկաչեն իրար եւ թխել ջեռոցում Ջեռոցը պետք է լավ փակված լինի, որպեսզի խմորը փքվի, բարձրանա եւ մեջը դատարկություն առաջանա

## ԿՐԵՄԾ

2 ձվով եւ 1 թ.բ. շաքարավազով գոգլի անել, ավելացնել 3 ճ.գ. այսուր եւ խառնելը շառւնակելով՝ աստիճանաբար ավելացնել կես լիտր եռացրած եւ սառեցրած կաթ. Դնել մարմանդ կրակին եւ անընդհատ խառնել՝ մինչեւ թանձրանա թողնել գոլանա, ավելացնել 100 գր կարագ, վանիլ, նորից լավ խառնել եւ թողնել սառչի

Եփված էկլերները մեկ-մեկ վերցնել, ցանկացած տեղից սուր դանակով թեթեւակի կտրվածք անել եւ թեյի գդալով կրեմը զգուշությամբ լցնել մեջը Բոլորը լցոնելուց հետո վրան շաքարի փոշի ցանել

## ՔՈՒԼՈՒՐՅԱ

6 ձուն 2 թ բ շաքարավագի հետ լավ հարել Ավելացնել 1 տուփի փափուկ կարագ կամ մարգարին, նորից հարել Հետո լցնել 0,5 կգ. մածուն, 1 թ գ սոդայով, 1 փաթեթ վանիլին կամ դարչին, մի պտղունց աղ եւ այնքան այսուր, որ ստացվի ոչ շատ պինդ, ծեռքերին չկաշող խմոր թողնել մինչեւ լավ ուռչի

Վերցնել փոքր գնդեր, ափերով կլորացնել եւ այդ կլոր ծողիկները «հյուսնել» եւ ձեւավորված խմորի վրա խոհարական վրձնի օգնությամբ քսել հարած ծու, վրան ցանել քունջութի սերմեր եւ եփել նախօրոք տաքացրած ջեռոցում



Կարելի է պատրաստել նաեւ թթվամորով:

Այս խմորեղենը հիմնականում պատրաստվում է **Քրիստոսի Յարության Տոնին՝ ԶԱՏԻԿԻՆ** Պատրաստել փոքրիկ զամբյուղներ, մեջը տեղադրել ներկած ձվերը, խմորի վրա ծու քսել, քունջութի սերմեր ցանել եւ եփել ջեռոցում

## ԽՆՁՈՐՈՎ ԹԽՎԱԾՔ


1 ձուն 1 թ.բ. շաքարավագի հետ լավ հարել, ավելացնել 1 ճ գ. յուղ եւ չորս բաժակ այսուր խմորը լինում է խորիգի նման

1 կգ. խնձորն անցկացնել քերիչով, ավելացնել 1 թ բ. շաքարավագ խմորի կեսը լցնել յուղ քսած թիթեղի վրա եւ լավ տափակացնել, վրան լցնել խնձորը, իսկ վերեւի շերտում լցնել մնացած խմորը եւ հարթեցնել թխել նախօրոք տաքացրած եւ մարմանդ վառվող ջեռոցում Եփելուց հետո վրան ցանել շաքարի փոշի եւ կտրատել փախլավայածեւ

## ՓՈՂԱՇՈՒՇԱՆ (Կալա)

2 ձու, 1 թեյի բաժակ շաքարավազ, շաքարի փոշի, 1 բաժակ ալյուր, կես խնձոր

Զուն եւ շաքարավազը լավ հարել Լցնել ալյուրը Ստացվում է ծորուն խմոր Ձեռոցի թիթեղի վրա ալյուր ցանել, ստացված խմորից ճաշի գդալով լցնել ալյուրոտված թիթեղի վրա եւ թխել ոչ շատ բարձր ջերմության ջեռոցում խնձորից ձողիկներ կտրատել Յանել եւ եփված յուրաքանչյուր խմորի վրա դնել խնձորի ձողիկ (որպես առէց) եւ խմորին տալ փողաշուշանի տեսք. Վրան շաքարի փոշի ցանել Կարելի է եւ նախօրոք խմորից մի քիչ վերցնել, իետք խառնել կամաչ գույն եւ ալյուրոտված թիթեղի վրա լցնել երկարավուն տեսքով եւ ստանալ տերեւներ Սառչելուց հետո կալաների վրա շաքարի փոշի ցանել եւ «տերեւներով» զարդարված դնել խմորեղենի համար նախատեսած ափսեի մեջ



Ճիշ վերցնել, իետք խառնել կամաչ գույն եւ ալյուրոտված թիթեղի վրա լցնել երկարավուն տեսքով եւ ստանալ տերեւներ Սառչելուց հետո կալաների վրա շաքարի փոշի ցանել եւ «տերեւներով» զարդարված դնել խմորեղենի համար նախատեսած ափսեի մեջ

## ՀԱԼՎԱ

Վերցնել 1 տուփ կարագ կամ մարգարին Տաքացնել. լցնել 5 բաժակ ալյուր եւ փայտե գդալով անընդհատ խառնել, մինչեւ ալյուրը ստանա դեղին երանգ Ավելացնել 1 թեյի բաժակ կտրատած ընկույզ, նորից խառնել Շաքարաջուրը խառնել ըստ ճաշակի, մինչեւ ստացվի պինդ, միատարր զանգված Տաք-տաք լցնել տափակ ափսեների մեջ, գդալով լավ հարթեցնել, փախլավայածեւ կտրատել եւ թողնել սառչի Վրան կարելի է զարդարել ծեծած ընկույզի եւ դարչինի խառնուրդով

## **ՍՊԻՏԱԿԱՆԱԾ ԶԱՎԱՐՈՎ (մանայ կրոպ) ՀԱԼՎԱ**

3 թ.ք. սպիտակահատ ծավարը 200գր. մարգարինով կամ կարագով լավ բովել (մարմանդ կրակով), անընդհատ խառնելով, մինչեւ վարդագումելը

4 թ.ք. ջրով եւ 2 թ.ք. շաքարավագով պատրաստել շաքարաջուր եւ թիչ-թիչ լցնել բովզած սպիտակահատ ծավարի վրա եւ անընդհատ խառնել, որպեսզի տակը չկպչի Եփվելուց հետո կաթսայի վրա փակել սրբիչով, դնել կափարիչը եւ թողնել ուռչի Մատուցել դարչինով:

## **ԲԱՆԱՆ**

Խմորը՝ 1 ձուճ հարել, ավելացնել 1 տուփի փափուկ մարգարին, 1թ.ք. մածուն՝ 0,5 թեյի գդալ սոդայով, մեկ պտղունց աղ եւ ալյուր այնքան, որ խմորը ծեռքերին չկպչի.

Միջուկը՝ 1 տուփի կաթնաշոռ, 1 թ.ք. շաքարավագ, կես թ.ք. ալյուր, կտրատած ընկույզ

Անել փոքր գնդեր, գրտնակով բացել, լցնել միջուկը, փաթաթել, տալ բանանի ծեւ եւ եփել մարմանդ ջեռոցում՝ մինչեւ թեթեւակի վարդագումելը: Սառչելուց հետո ցանել շաքարի փոշի



## **ԽԱՎԻԾ**

Կես կգ ալյուրը 200 գրամ յուղով լավ բովել, մինչեւ բաց-դեղնավուն դառնալը: Վրան ավելացնել տաք շաքարաջուրը /1 բաժակ շաքարավագ 3 բաժակ ջուր հարաբերությամբ/ և լավ խառնելով եփել Մի փոքր պնդանալուց հետո ավելացնել 1 բաժակ եռացրած տաք կաթ եւ նորից եփել՝ մինչեւ միատարր զանգված դառնալը

## ՏՐՅՈՒՖԵԼ

250 գր. փափուկ կարագը, 1 ձուն, 2 ճ.գ. շաքարի փոշին լավ հարել.  
Ավելացնել մի պտղունց աղ, մի փոքր քացախով բացված սողա եւ այն-

քան ալյուր, որ ստացվի  
պինդ խմոր: Ստացված  
խմորից գնդիկներ անել,  
տալ տրյուֆելի ծեւ եւ թխել  
մարմանդ ջեռոցում մինչեւ  
թեթեւակի վարդագունելը.

Սառչելուց հետո ցանել  
շաքարի փոշու եւ կակաոյի  
խառնուրդ:



## ԱՆՈՒԱՊՈՒՐ

Կորկոտը (ծավարը) լվանալ լցնել կաթսայի մեջ եւ եփել մինչեւ լավ  
հալչի Ավելացնել շաքարավազ եւ կարագ ըստ ճաշակի մի փոքր աղ եւ  
շարունակել եփել Լցնել ափսեների մեջ վրան լցնել դարչինի եւ ծեծած  
ընկույզի խառնուրդ

## ԿԱԹՆԱՊՈՒՐ

I Բ ք րիմէ 1 լիլր կաք. աղ շաքարավազ

Բրինձը լվանալ եփել սառը ջրով քամել Լցնել եռացրած կաթի մեջ  
ավելացնել շաքարավազ ըստ ճաշակի մի փոքր աղ եւ եփել մարմանդ  
կրակով Երբ բրինձը եփվի թողնել մի փոքր հանգստանա ապա լցնել  
ափսեների մեջ եւ վրան դարչին շաղ տալ

## ՓԵԼԻՉԵ

2 բաժակ սառը կաթի մեջ լցնել 4 կերակրի գդալ կարտոֆիլի ալյուր (օսլա), մեկ թեյի բաժակից մի փոքր պակաս շաքարավազ, լավ խառնել եւ դնել մարմանդ կրակին Անընդհատ խառնելով, ավելացնել 4 թ. բ. տաք կաթ, 2 հարած ծու, 100 գրամ կարագ, 1 փաթեթ վաճիլին խահնելով եփել այնքան, մինչեւ թանձրանա Լցնել ափսեների մեջ, թողնել սառչի Վրան դարչին ցանել

## ՆԻՇԱՍՏԱ

Ցորենը մաքրել, լվանալ, լցնել էմալապատ ամանի մեջ եւ վրան լցնել այնքան ջուր, որ լրիվ ծածկվի Մոտ մեկ շաբաթ ամեն օր փոխել ջուրը, այնքան, որ մատով սեղմելիս ցորենի միջուկը հեշտությամբ դուրս գա

Ցորենի հատիկներն անցկացնել մսաղացով, լցնել մաղի մեջ եւ վրան անընդհատ ջուր լցնելով՝ խառնել. Թեփուկները կմնան մաղի մեջ, իսկ օսլան՝ բարակ շերտով կնստի մաղի տակ դրված էմալապատ ամանի մեջ Որոշ ժամանակ թողնելուց հետո, երբ օսլան բարակ շերտով կնստի ամանի հատակին, զգուշությամբ քանել ջուրը, իսկ օսլան բարակ շերտով փոել՝ չորացնելու Ատացվում են փոքրիկ կտորներ Լավ չորանալուց հետո մաքրուր շշով լավ տրորել, դարձնել ալյուրանման եւ պահել ապակյա չորտարայի մեջ



Նիշաստան շատ օգտակար է երեխաների համար Եփում են եռացրած ջրով կամ կաթով, շաքարը՝ ըստ ցանկության:

## ԽՈՐՈՎԱԾ ԴՐՈՒՄ

Դդումը լավ լվանալ, գդալով հեռացնել սերմերը Առանց կեղեւը հանելու, շերտերով կտրատել Շարել թիթեղին, վրան շաքարավազ ցանել եւ դնել ջեռոցը. Երբ երեսը կարմրի, ուրեմն պատրաստ է Թողնել սառչի եւ մատուցել

# ԱՏՎԱՐԱՆԱՏԻԿ

(Երեխայի առաջին արամը հանելու առթիվ)

Ցորենը լավ լվանալ, եփել մինչեւ փափկի, բայց չճաքի Մի փոքր վերցնել՝ երեխայի գլխին լցնելու համար Մնացածը լցնել էնալապատթասի մեջ, թողնել սառչի Ավելացնել շաքարավազ, կտրատած նուշ եւ ընկույզ, լավ բոված ալյուր, մանր, կլոր կոնֆետներ, նռան հատիկներ, մի փոքր աղ.

## ՂԱՓԱՄԱ

Վերցնել միջին չափի դդում, լավ լվանալ, գլխիկը կլորավուն կտրել՝ որպես կափարիչ օգտագործելու համար ճաշի գդալով հեռացնել միջուկն ու սերմերը. Միջուկն առանձնացնել սերմերից, մանր կտրատել, ավելացնել խաշած բրինձ, չամիչ, մանր կտրատած խնձոր, դեղին սալոր կամ սալորաչիր, շաքարավազ, մեկ բաժակ ծեծած ընկույզ կամ նուշ, աղ, դարչին եւ լավ խառնել Հետո դդումի պատերին ներսի կողմից յուղ քսել եւ այդ խառնուրդով լցոնել դդումը. Այնուհետեւ փակել դդումից կտրված կափարիչով Լցնած դդումը դնել յուղ քսած թիթեղի վրա եւ եփել ջեռոցուն մինչեւ պատրաստ լինելը.

Այնուհետեւ հանել ջեռոցից, բացել կափարիչը, դնել մի մեծ կտոր կարագ եւ կափարիչը նորից փակել կտրատել եւ մատուցել




# ԿԱՐԿԱՆԴԱԿՆԵՐ

## ՀԱՆԾԵՄԻ ՊՈՐՏ

**ԽՄՈՐԾ՝** 1 ձու, 1 թ գ. աղ, կես լիտր  
մածուն՝ 1թ.գ սոդայով, ալյուր

**Միջուկը՝** կես կգ տավարի մսի հետ  
աղալ 3-4 մեծ գլուխ սոխ, մի քանի  
պճեղ սխտոր Ավելացնել սեւ եւ կար-  
միր պղպեղ, աղ, մանր կտրատած հա-  
մեմ եւ մաղաղանոս.

Չուն հարել, ավելացնել մածունը,  
աղը Այսուրը լցնել այնքան, որ ստաց-  
վի ծեռքերին չկաչող խմոր Անել փոքր  
գնդեր Գրտնակով բացել (լահմա-  
ջունից փոքր), միջուկից գդալով դնել  
մեջտեղը Այնուհետեւ կողքերից խմորը բերել մեջտեղ, թեթեւակի սեղ-  
մել՝ թողնելով պորտի նման փոքր անցք Թափայի մեջ երկու կողմից  
տապակել տաքացրած ծեթի մեջ



## ԼԱՅՄԱԶՈՒՆ (լահմա՝ միս, ջուն՝ խմոր)

**ԽՄՈՐԾ՝** 1 թեյի գդալ սոդա խառնած մեկ շիշ մածուն, ալյուր, աղ  
Պատրաստել ոչ շատ պինդ, ծեռքերին չկաչող խմոր

**Միջուկը՝** կես կգ ոչխարի յուղոտ միսը, 4-5՝ միջին չափի գլուխ սոխը  
եւ 2-3 պճեղ սխտորը անցկացնել մսաղացով Ավելացնել սեւ եւ կարմիր  
պղպեղ, աղ, տոմատի մածուկ, կտրատած մաղաղանոս եւ լավ խառնել

Խմորից պատրաստել ընկույզից մի փոքր մեծ գնդեր, գրտնակով  
բացել խորտիկի ափսեի չափով Վրան քսել միջուկը, թիսել նախապես  
տաքացրած՝ ոչ շատ բարձր ջերմության ջեռոցում

# ՉԵՐՈՒՐԵԿԻ

## Առաջին տարբերակ

Խմորը՝ 1 կգ այսուր, 1թ գ աղ, քացախով բացած 1թ գ սոդա, գոլ ջուր

**Միջուկը՝** կես կգ. աղացած միս, կտրատած լոլիկ, համեմ, մաղադանոս, սեւ եւ կարմիր պղպեղ, աղ եւ ջուր այնքան, որ միջուկը շատ պինդ չլինի

Խմորից պատրաստել փոքր գմղեր եւ գրտնակով բացել լահմաջունի չափով Միջուկը գդալով լցնել բացված խմորի մի կողմուն, մյուս կողմը վրա բերել եւ ծայրերը սեղմելով՝ միացնել Տապակել առատ ձեթի մեջ՝ սկզբում մի կողմը, հետո՝ մյուս եւ դնել էնալապատ կաթսայի մեջ՝ փակելով կափարիչը.



## Երկրորդ տարբերակ

Չորս բաժակ այսուր, 1,5 բաժակ ջուր, 2 ճ գ ձեթ, մի փոքր աղ

Ջուրը աղի եւ ձեթի հետ եռացնել, լցնել կես բաժակ այսուր եւ լավ խառնել, որպեսզի գնդիկներ չմնան Թողնել սառչի Ավելացնել ձուն եւ նորից խառնել խառնել նաեւ մնացած այսուրը Պետք է ստացվի ձեռքերին չկպչող խմոր Թողնել հանգստանա

**Միջուկը՝** 500 գրամ քիչ յուղոտ ոչխարի մսի հետ աղալ մի քանի գլուխ սոխ, ավելացնել կես բաժակ ջուր, սեւ եւ կարմիր պղպեղ, աղ, կտրատած մաղադանոս եւ խառնել

Խմորից փոքրիկ գնդիկներ պատրաստել, գրտնակով բացել, միջուկից լցնել բացված խմորի կես մասին, մյուս մասը վրա բերել, մատներով ծայրերը լավ միացնել եւ տապակել լավ տաքացրած, առատ ձեթի մեջ Կաթսայի մեջ տեղափորելուց հետո անպայման փակել կափարիչը

## ԿԱՐԿԱՆԴԱԿԻ ԽՄՈՐ

### **Առաջին տարբերակ**

Խմորը՝ 2 ձու, կես լիտր մածուն՝ 1 թեյի գոյալ սոդայով, լցնել այնքան ալյուր, որ լինի ոչ շատ պինդ խմոր թողնել հանգստանա 2 ժամ.

### **Երկրորդ տարբերակ**

Թասի մեջ լցնել ալյուր, վրան աղ շաղ տալ, 16 գ. քացախով քացած 1թ գ. սոդա եւ լավ հունցել խմորը պատրաստ լինելուց հետո ավելացնել 1 ափ ձեթ եւ նորից հունցել. Օգտագործել ցանկացած կարկանդակի համար:

## ԿԱՐՏՈՖԻԼՈՎ ԿԱՐԿԱՆԴԱԿ

Պատրաստել խմոր, ցանկացած տարբերակով:

**Միջուկը՝** կարտոֆիլը խաշել, աղալ մսաղացով. Սոխը մանր-մանր կտրատել, սոխեռած անել, լցնել կարտոֆիլը եւ ձեթի մեջ տապակել. Ավելացնել աղ, կարմիր եւ սեւ պղպեղ ու շատ մանր կտրատած համեմ

Խմորից պատրաստել հավասարաչափ գնդիկներ եւ դնել ալյուր շաղ տված խոհանոցային տախտակին, վրան պոլիէթիլենային թաղանթով ծածկել, որպեսզի գնդիկները չչորանան Առանձին ափսեի մեջ ձեթ լցնել, մատները ձեթոտել, մեկ-մեկ վերցնել գնդերը, երկու ձեռքով բացել, մեջը լցնել կարտոֆիլի սառը միջուկը, երկու կողմից վրա բերել, միացնել այնպես, որ միացնան տեղը չերեւա Տապակել լավ տաքացրած եւ առատ ձեթի մեջ.

Կարելի է պատրաստել նաև ղըյմայով:

## ՍՊԱՆԱԽՈՎ ԿԱՐԿԱՆԴԱԿ

Պատրաստել կարկանդակի խմոր.

Մպանախը խաշել, լավ ջրքամել. Զեթով եւ շատ սոխով սոխեռած անել, ավելացնել սպանախը, աղ, կարմիր պղպեղ. Լավ սառչելուց հետո պատրաստել կարկանդակներ եւ տապակել առատ ձեթի մեջ

## **ՍՊԱՆԱԽՈՎ ԲՅՈՐԵԿ**

Պատրաստել խմորը վերեւում նշվախ ցանկացած տարբերակով

**Միջուկը՝** սպանախը լավ լվանալ, խաշել եւ քամել Զեթով սոխեռած անել, սպանախը լցնել վրան, ավելացնել աղ, աղացած քաղցր կարմիր պղպեղ եւ տապակել

Խմորը օխլավույով կամ գրտնակով բացել, որպեսզի ստացվի մեծ խմորաթերթ Լցնել սառած միջուկը եւ ռուլետի նման ոլորել Զգուշությամբ վերցնել եւ թիթեղի մեջ դնելով, մեջտեղից սկսած, պտտեցնել՝ տալով փաթաթված օձի ծեւ Վրան ծու քսել եւ եփել նախօրոք տաքացրած ջեռոցում Մատուցելիս կտրատել

## **ՊԱՆՐՈՎ ԿԱՄ ՍՍՈՎ ԲՅՈՐԵԿ**

2 ծուն հարել, ավելացնել 1 ճ. գ. քացախ, 5 ճ.գ ծեթ եւ 3 թ թ. գոլ ջուր Պատրաստել այնպիսի խմոր, որպեսզի չկաչի ծեռքերին Անել 3 գունդ, թողնել մի փոքր հանգստանա, ապա օխլավույով կամ գրտնակով բացել, յուրել, փաթաթել եւ դնել սառնարանը Դետո նույնը կրկնել 2-րդ անգամ խմորը բացել (գրտնակը պտտեցնելով միշտ նույն ուղղությամբ), կտրատել խաչապուրիի չափով, յուրաքանչյուրի վրա ավելացնել դըյմա կամ պանրով միջուկ (քերած պանիր, թթվաշոռ, 1 ծու, կտրատած մաղաղանոս, կարմիր եւ սեւ պղպեղ), փակել, վրան հարած ծու քսել եւ եփել ջեռոցում.

## **ՀԱՑՈՎ ՏԱՔ ԽՈՐՏԻԿ**

Հացը շերտերով կտրատել, մեկ րոպե պահել սառը կաթի մեջ եւ համել Պանիրն անցկացնել քերիչով, վրան ավելացնել 2 հատ հարած ծու եւ քսել հացի կտորների երեսին. Զեռոցի թիթեղին յուղ քսել, հացի կտորները դասավորել վրան եւ եփել մինչեւ կարմրելը

## **ԲՈՒՉԱ**

Լավաշը կտրատել 10 սմ լայնությամբ Մեկ բոխչայի համար երկու կտոր լավաշ է պետք Լավաշի կտրորները խաչածեւ դնել իրար վրա Մեջտեղը դնել դրյամա, լայնությամբ կտրատած պանիր, համեմ, տոնատի մածուկ կամ քեչուա, մեկ կտոր երշիկ երկու կողմից լավաշները բերել իրար վրա, հետո ծալել մյուս շերտերը՝ տալով բոխչայի ձեւ Վրան ծու քսել եւ եփել ջեռոցում՝ մինչեւ կարմրելը

## **ԱՐԻ ԶՈՂԻԿՆԵՐ**

*200 գր. կարագ, 200 գր. բրդասեր, 200 գր. պանիր, 2 չու*

Պանիրը թրցել, թողնել 20-30 րոպե, հետո լավ տրորել Փափուկ կարագը կամ մարգարինը, թթվասերը, պանիրը, 1 ծուն խառնել, ավելացնել քացախով քացված սոխա եւ հունցել ծեռքին չկացող խմոր Բաժանել 4 գնդի Գնդերը գրտնակել, կտրատել եւ ստանալ 10-15 սմ հաստությամբ ու 1,5 սմ. լայնությամբ ծողիկներ թիթեղի վրա ալյուր ցանել, կտրատված ծողիկները զգուշությամբ շարել կողք-կողքի, վրաները վրձինով ծու քսել եւ թխել ոչ շատ բարձր ջեռմության ջեռոցում

## ՀԱՅ

Նախ պետք է պատրաստել թթվամորը:

Վերցնել 2 ճ գ չոր խմորիչ եւ գոլ ջրով հալեցնել. Ավելացնել 1 թ բ. գոլ ջուր, 2 ճ գ. շաքարավազ, կես թեյի բաժակ ալյուր եւ խառնել՝ մինչեւ միատարր զանգված դառնալը: Դնել տաք տեղ, վրան փակել եւ թողնել հասունանա:

Թթվամորը պատրաստ լինելուց հետո խմորի համար նախատեսված թասի մեջ լցնել 1 կգ. ալյուր, մեջտեղը փոս բացել, լցնել կես լիտր գոլ ջուր, պատրաստի թթվամորը լցնել վրան եւ լավ հունցել, որպեսզի ստացվի ոչ շատ պինդ խմոր: Փակել եւ թողնել մի քանի ժամ, մինչեւ ուռչի եղբ խմորը պատրաստ լինի՝ նորից տրորել եւ թողնել հանգստանա. Այնուհետեւ բաժանել ցանկացած չափի գնդերի: Գնդերը դնել ձեթ քսած թիթեղի վրա եւ թողնել մեկ ժամ. Այնուհետեւ խմորին տալ ցանկացած ձեւ (մատնաքաշի, քառակուսու) եւ թիւել ջեռոցում:

Դացը կարելի է թիւել նաեւ խմորեղենի համար նախատեսված կաղապարի մեջ:

Եփվելուց հետո երեսին ափով թեթեւակի ջուր քսել.

## ՄԱԾՈՒՆ


Մեկ լիտր կաթը եռացնել, թողնել սառչի այնքան, որ մատը մտցնելիս դիմանա տաքությանը: Վերցնել կես թեյի բաժակ մածուն, կաթով բացել եւ լցնել կաթի վրա. Խառնել, կափարիչը դնելուց հետո վրան փակել բրյա կտորով եւ թողնել մերվի երբ բավականին պնդացած կլինի, բացել, վրան դնել մի քանի ժակ ծալած մաքուր սրբիչ եւ ժամանակ առ ժամանակ քանել, որպեսզի մածունը պինդ լինի. Լավ սառչելուց հետո տեղավորել սառնարանում:

# ՏՈՆԱԿԱՆ ՍԵՂԱՆԻ ՀԱՄԱՐ

## ԿԱՐՄԻՐ ԼՈԼԻԿՈՎ ԿԱԿԱՉՆԵՐ

Վերցնել հավասարաչափ լոլիկներ, լվանալ, վերեւի մասից խաչածեւ կտրել թեյի գդալով զգուշությամբ հեռացնել միջուկը

Բրինզա պանիրը անցկացնել քերիչով (եթե պանիրն աղի լինի, անպայման խառնել կաթնաշոռ), ավելացնել ճզմած սխտոր, շատ մանր կտրատած քաղցր կանաչ պղպեղ եւ համեմ, լավ խառնել ու լցոնել լոլիկները Տափակ սալաթամանի մեջ դասավորել մառոլի թերթիկներ եւ լցոնած լոլիկները շարել դրանց վրա



## ԶՎՈՎ ՆԱՎԱԿՆԵՐ

Զվերը պինդ խաշել, կեղեւները մաքրել եւ սուր դանակով երկարությամբ կիսել Զգուշությամբ հանել դեղնուցները եւ խոր ամանի մեջ տրորել, ավելացնել կաթնաշոռ, աղ, ձիթապտղի ձեթ, քացախ, սեւ պղպեղ, ճզմած սխտոր, մանր կտրատած մաղաղանոս, լավ խառնել Ստացված զանգվածով թեյի գդալի օգնությամբ լցոնել ձվերը վրան ավելացնելով մի փոքր թթվասեր Դասավորել տափակ ափսեների մեջ եւ զարդարել կանաչիով.

## ՍՈՒՆԿ


Կարմիր բողկից կտրել կիսաշրջանակ, դանակի ծայրով վրան խալեր բացել Պինդ խաշած ձուն հարթ կողմի վրա կանգնեցնել եւ լուցկու հատիկով միացնել գլխիկին եւ դասավորել տափակ ափսեի մեջ «Սնկի» ներքեւի մասում լցնլ աղացած պաքսիմատ իբր ցողունը հողոտ է:

## ՎԱՐՈՒՆԳՈՎ ՆԱՎԱԿՆԵՐ

Վարունգի կեղեւները մաքրել, երկարությամբ կիսել եւ թեյի գդալով հեռացնել-միջուկը: Լոլիկը մանր կտրատել, ավելացնել պինդ խաշած եւ կտրատած ձու, ամսական բողկ, աղ, թթվասեր եւ խառնել: Գդալով լցնել «նավակների» մեջ՝ յուրաքանչյուրի վրա ավելացնելով թթվասեր եւ մանր կտրատած սամիթ:

## ԼՑՈՆԱԾ ՊՂՊԵՂՆԵՐ

Վերցնել քաղցր կանաչ եւ կարմիր պղպեղներ Սուր դանակով հեռացնել գլխիկները եւ սերմերը, լվանալ եւ շրջել մաքուր սրբիչի վրա



**Միջուկը՝** պանիրը եւ սառած կարագը անցկացնել քերիչի խոշոր կողմով, ավելացնել նաեւ մի փոքր կաթնաշոռ, ճզմած սխտոր, կարմիր պղպեղ եւ լավ խառնել Լցնել պղպեղները եւ սեղանին դնելուց առաջ 10-15 րոպե դնել սառնարանում Յանել, շատ սուր դանակով մի քանի շերտ կտրել եւ դասավորել սամիթի տերեւներով գարդարված տափակ սալաթամանի մեջ

## **ԲԱԴ՝ ԲԱԴԻԿՆԵՐԻ ՀԵՏ**

Սպիտակ բողկից փոքրիկ, կլոր գունդ կտրել, բացել բերանի տեղը եւ այնտեղ մտցնել գազարից պատրաստված կտուցը Գունդը հազցնել լուցկու հատիկին (լուցկու գլխիկը մկրատով կտրելուց հետո) եւ ամրացնել պինդ խաշած ու մաքրած ձվի սուր ծայրին

Պինդ խաշած դեղնուցի վրա հարմարեցնել փոքրիկ կտուց եւ գազարով պոչիկ ու պատրաստել բաղիկներ

Պատրաստի բաղը եւ բաղիկները դասավորել համեմի կամ մաղաղանոսի ճյուղեր լցրած հարթ ափսեի մեջ

## **ԿԱԹՆԱՇՈՈՒՎ ԳՆԴԻԿՆԵՐ**

2 տուփ կաթնաշոռը լավ տրորել 100 գ պանրի եւ 50 գ կարագի հետ Ավելացնել մի փոքր կարմիր պղպեղ, մի քանի ճյուղ շատ մանր կտրատած մաղաղանոս Պատրաստել հավասար գնդիկներ, մի կողմը թաթախել քաղցր, կարմիր պղպեղի մեջ եւ դասավորել տափակ ափսեներում պղպեղով թաթախված մասը դեպի վերեւ


## **ԶԱՄԲՅՈՒՂՆԵՐ ՍԱԼԱԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ**

Կես տուփ մարգարինը տրորել, ավելացնել մի փոքր սոդա խառնած 2 ճ գ մածուն, կես թեյի գդալ աղ, սեւ եւ կարմիր պղպեղ Այսուր լցնել այնքան, որ ստացվի փափուկ, բայց ձեռքերին չկպչող խմոր.

Խմորը ձեւավորել տալով ցանկացած չափի զամբյուղի ձեւ, վրան քսել հարած ծու եւ եփել ջեռոցում Սառչելուց հետո սալաթները լցնել մեջը

Զամբյուղների համար կարելի է պատրաստել նաեւ կոթեր՝ խմորին տալով կլորավուն տեսք եւ ձվի դեղնուցով փակցնել զամբյուղներին Դա արդեն կախված է տանտիրուիու ֆանտագիայից:

## ԴԴՄԻԿԸ ԿՈՏԼԵՏԻ ԽճՈՂԱԿՈՎ



Ընտրել հավասար, կլորավուն դդմիկներ Լավ լվանալ, կտրատել 12-15 սմ հաստությամբ, հեռացնել միջուկը այնպես, որպեսզի փոսիկ առաջանա թեթեւակի տապակել ծեթով:

Փոսիկների մեջ լցնել կոտլետի խճողակ եւ դասավորել պաքսիմատի փոշի ցանած թիթեղի վրա: Եփել մարմանդ ջերմության ջեռոցում Սատուցել թթվասերով

## ԿԱՐՄԻՐ ԼՈԼԻԿՈՎ ՍԱԼԱԹ

Ընտրել հավասարաչափ կարմիր լոլիկներ եւ մեջտեղից կիսել: Դասավորել տափակ սալաթամանների մեջ կտրված մասը վերեւ եւ վրան աղ ցանել

ճգնած սխտորը, շատ մանր կտրատած սոխը եւ սամիթը խառնել ու թեյի գդալով լցնել կտրատած լոլիկների մեջտեղում այնպես, որ կողքերը մի փոքր բաց մնան: Լոլիկների արանքները ռեհանի տերեւներով զարդարել:


# ԸՄՊԵԼԻՔՆԵՐ

## ՆՇՈՎ

Վերցնել 150-200 գրամ նուշի միջուկ, վրան նռացրած ջուր լցնել եւ հեռացնել կեղեւները Յետո մաքրված նուշը լավ ծեծել հավանգով, լցնել ապակե կամ էմալապատ ամանի մեջ եւ վրան լցնել 750 գրամ օղի, մի քանի կտոր թարմ կամ չորացրած նարնջի կեղեւ Փակել եւ թողնել մեկ ամիս Յետո քամել, ավելացնել 250 գրամ շաքարավազ, լավ խառնել Շաքարավազը լուծվելուց հետո լցնել շշերի մեջ եւ փակել. Նշի լիկյորը շատ հաճելի համ եւ հոտ ունի

## ՆԱՐՆՁԻ ԿԵՂԵՎՈՎ

Էմալապատ կաթսայի մեջ լցնել կեղեւներով, մանր կտրատած 4-5 նարինջ եւ դարչին երկու բաժակ ջրով եւ 750 գրամ շաքարավազով պատրաստել շաքարաջուր եւ լցնել կտրատած նարնջի վրա, լցնել նաեւ 1 լիտր օղի թողմել մեկ ամիս, հետո քամել եւ լցնել շշերի մեջ ու փակել կափարիչը




## ԿԱԹՈՎ

1 լիտր նռացրած տաք կաթին ավելացնել 1 կգ շաքարավազ, 1 թ գ. դարչին, 3 ճ. գ. կակաո եւ կես լիտր օղի Լավ խառնել եւ լցնել շշերի մեջ Օգտագործելիս թափահարել

## **«ՅՈՒՊԻ»- ով**

1 բաժակ տաք ջուրը, 1 թ թ. շաքարավազը եւ մեկ փաթեթ «Յուպի»-ն լավ խառնել, ավելացնել կես լիտր օղի, թափահարել, լցնել շշերի մեջ

### **ԿԵՌԱՍԻ ԿԱՄ ԲԱԼԻ ԿՈՐԻԶՆԵՐՈՎ**



Կեռասի 300 գրամ կորիզները կոտրել, վրան լցնել 1 լիտր օղի եւ շիշը դնել արեւի տակ երկու ամիս հետո քամել, ավելացնել 3 բաժակ ջրի մեջ լուծված 1 կգ շաքարավազ, լավ խառնել եւ լցնել շշերի մեջ

Նույն ձեւով կարելի է պատրաստել եւ ծիրանի կորիզից

### **ԱՆԱՆՈՒԽՈՎ**


Վերցնել 2-3 կապ աճանուխ, լավ լվանալ, տերեւմերը հեռացնել, կոթերը լավ կտրատել, վրան ավելացնել 500-600 գրամ շաքարավազ, բերանը փակել ու երկու ամիս թողնել արեւի տակ երկու ամիս հետո վրան լցնել օղի Այդ հյութից վերցնել 100 գրամ եւ խառնել կես լիտր օղու մեջ Շատ հաճելի համ է տալիս

### **ԼՈՒԾՎՈՂ ՍՈՒՐճՈՎ**

100 գր. ջուր, 1 թ թ. շաքարավազ, 5 թ գ. լուծվող սուրճ եւ 1 տուփ վանիլ. Եռացնել եւ տաք վիճակում վրան ավելացնել կես լիտր օղի: Այնուհետեւ լավ թափահարել:

## ԴԵՂՁԻ ԿՈՐԻԶՈՎ

Դեղձի կորիզներն առանձնացնել, լցնել ապակե տարայի մեջ, վրան լցնել օղի՝ մինչեւ կորիզների ծածկվելը Պահել մութ տեղ 40 օր Այնուհետեւ պատրաստել օշարակ (աչքաշափով)։ Դեղձով օղին թանգիֆով (մառլյայով) քամել, օշարակը լցնել վրան եւ լավ թափահարել.



## ԿԻՏՐՈՆԻ ԿԵՂԵՎՈՎ

4-5 հատ լավ դեղին կիտրոնի կեղեւը մանր կտրատել, լցնել կես լիտր օղու մեջ եւ թողնել 40 օր Յետո քամել եւ խառնել 200 գրամ շաքարավազ եւ լավ խառնել մինչեւ շաքարավազը լրիվ լուծվի

## ՆՈՌՎ

Մեկ շիշ գինու համար վերցնել 3-4 մեծ նուռ. Կեղեւները հեռացնել եւ հատիկները թեթեւակի ճզմելով՝ լցնել ապակե կամ էմալապատ կաթսայի մեջ եւ լցնել գինին, որ նռան հատիկները բաց չմնան Թողնել 4-5 օր, հետո քամել եւ շատ համեղ ըմպելիքն արդեն պատրաստ է

# ԿՈԿՏԵՅԼ

## 3 հոգու համար



Մեկ ծվի դեղնուցը լավ հարել 3 թ. գ. շաքարավազի հետ: Առանձին բաժակի մեջ հարել սպիտակուցը՝ 3 թ գ. շաքարավազի հետ:

Գավաթների մեջ առաջին շերտում լցնել 1 թ գ կոնյակ, 1 գավաթ ոչ շատ քաղցր սուրճ, հետո՝ հարած դեղնուցը, ապա սպիտակուցը եւ վրան շոկոլադ քերել: Մատուցել փոքրիկ գդալով

## ՎԱՆԻԼԻԱ

1 կգ շաքարավազը եւ մեկ բաժակից մի քիչ ավել ջուրը եռացնել եռն սկսելուց հետո գդալի ծայրով ավելացնել լիմոնի աղ եւ կրակը մարմանդացնել Թողնել սառչի, գդալով վերցնել, մտցնել սառը ջրի մեջ եւ տալ գնդի ծեւ Եթե դառնում է փափուկ շաքարի ննան, ուրեմն պատրաստ է Հետո մեծ փայտե գդալով լավ խփել՝ լցնելով վանիլին խփել այնքան, մինչեւ սպիտակի եւ դառնա մածուցիկ

Ամառային շատ հաճելի ընպելիք է Վերցնել 1 լիքը թեյի գդալով, մտցնել սառը ջրով լցված բաժակի մեջ եւ ճաշակել

# ՄԻ ՔԻՉ ԷԼ ՀՈՒՄՈՐ

\*\*\*

Ժլատ իմամը (արեւելյան հոգեւորականը) եւ կինը նստած բաղրի-ջանով պատրաստված ճաշ են ուտում ճաշը շատ է դուր գալիս իմամին եւ սկսում է անընդիատ գովել կնոջը Կինը ցույց է տալիս ձերի շիշը եւ ասում

- Զանըս, համովը համով, ամա ձերին շիշը պարպեցավ

Այդ բանը լսելուն պես իմամի ուշքը գնում է եւ ճաշը այդպես էլ կոչ-վում է իմամ բայթը (իմամն ուշագնաց եղավ)

\*\*\*

Երկու հայրենադարձ ընկեր նստած ուտում-խմում են Օղու բաժակներն անընդիատ մեկն է լցնում ու միշտ ընկերոջ բաժակը կիսատ է լցնում, իսկ իրենը լեփ-լեցուն ու ասում

- Թու , գրողը տանը, նորեն իմ գավաթը շատ լեցվեցավ

Նույնը կրկնվում է մի քանի անգամ Ընկերը չի դիմանում եւ զայրացած ասում է.

- Ծո Գիքոր, ալ համբերությունս հատավ, իերիք է, զանըս, ատ գրողը տարածեն մեկ-մեկ ալ իմ գավաթս լեցու՛ր

\*\*\*

Մի ժլատ հայենադարձ ասում է կնոջը.

- Կնիկ, երկու հատ հավկիթ խաշե, ելլամ տանիք անթենան շտկեմ, իջնամ ուտեմ եւ երթամ գործի:

Բայց բարձրանալիս ոտքը սահում է եւ ընկնում է ցած. Ընկնելու ճանապարհին մի կերպ հասցնում է ծայն տալ կնոջը.

- Կնի՛կ, իմ բաժին հավկիթները իանե թող չխաշվին, ափսոս են, ես կմեռնիմ կոր

\*\*\*

Յայրենադարձը գարեջրատանը կանչում է մատուցողին եւ զայրացած ասում.

- Գարսոն, գարեջուրիս մեջ ճանճ կլողա, այս ի՞նչ կընշանակե

- Կներեք, պարոն, ես մատուցող եմ, գուշակությամբ չեմ զբաղվում,- անտարբեր պատասխանում է մատուցողը եւ հեռանում

Յայրենադարձ սկեսուրը պատրաստվում է գնալ շուկա եւ ասում է տեղացի հարսին.

- Աղջիկս, երթամ շուկա փաթաթես, թոմաթես, ֆասուլյա, բիզելյա, փորթուքալ, թախթաբիթի առնեմ գամ

Յարսն անհանքեր սպասում է սկեսուրոց վերադարձին

Սկեսուրը վերադառնում է շուկայից եւ սկսում դատարկել իր արած գնումները.

Յարսը նայում, նայում է ու հարցնում

- Մայրիկ, դու ինչ որ բաների անուններ տվեցիր, չե՞ս առել դրանք

- Առած եմ աղջիկս, ինչպե՞ս չեմ առած Աս քեզի փաթաթես (կարտոֆիլ), սա քեզի թոմաթես (լոլիկ), ասիկա ֆասուլյա (լոբի), բիզելյա (ոլոռ), ասիկա փորթուքալ (նարինջ), աս ալ քեզի թաղթաբիթի /համեմ/ - զարմացած հարսին բացատրում է սկեսուրը եւ սկսում են ծիծաղել

\*\*\*

Մի հայրենադարձ կանչում է մատուցողուհուն եւ զայրացած ասում.

- Լսե, տիկին, ձեր բերած ապուրը լվացքի փոշիի համ ունի

- Զարմանալի՞ է,- ծոր է տալիս մատուցողուհին,- սա մեր ամենալավ ճաշատեսակն է Ներեցեք, պարոն, իսկ Դուք հաճախակի՞ եք օգտագործում լվացքի փոշի, որ համերին այդքան լավ ծանոթ եք:

\*\*\*

Երեւանցին եւ իր սփյուռքահայ բարեկամը նստած միրգ են ուտում Երեւանցին, տեսնելով, որ հյուրը խնձորի կեղեւները շատ հաստ է մաքրում, զգուշությամբ ասում է.

-Պարոն Աթանաս, դուն գիտե՞ս, որ ամբողջ Վիտամինները կեղեւին մեջ են

Սփյուռքահայը, հավաքելով կեղեւները, լցնում է Երեւանցու ափսեի մեջ եւ ինքնագոհ ասում.

- Ա՛ռ տղաս, դուն Վիտամինները կեր, ես ալ խնձորը կուտեմ

Քահանան մեկի տանը նստած շատ մանր փաթաթած տոլմա է ու-  
տում Եվ ամեն անգամ պատառաքաղով միանգամից մի քանի հատ է  
վերցնում.

Տանտիրոջ սրտից է գնում եւ իբր կատակով հարցնում է.

- Տեր հայր, ձեր զյուղին մեջ մեռելները քանի՞-քանի՞ կթաղես.
- Տղաս, եթե մեծահասակ ըլլա մեկ-մեկ, իսկ եթե պատիկ երկու-երե-  
քը միասին,- իրեն չի կորցնում քահանան.

\*\*\*

- Գաղսոն, ինչո՞ւ այս խեցգետինը մեկ ոտքանի է.
- Օ՛, պարոն, նա կովել է մյուսների հետ եւ կորցրել մեկ ոտքը.
- Զեզմե շատ կխնդրեմ, որ ինձի համար բերեք հաղթանակողին, -  
հեգնում է հայրենադարձը

\*\*\*

- Չհասկըցա՞՛, դուք ինչո՞ւ կուզեք հիմա հաշիվը փակել, դեռ ես նույ-  
նիսկ ուտելը չեմ սկսած,- զարմացած հարցնում է հայրենադարձը
- Պարո՞ն, մի մոռացեք, չէ՞ որ դուք սունկ եք ուտելու, սո՞ւնկ, -  
խորհրդավոր ծայնով պատասխանում է մատուցողուիհին

\*\*\*

Մի քանի երեւանցի տղաներ, որոնք ֆրանսերեն չեն իմանում, Փա-  
րիզի ռեստորաններից մեկում նստած, մտածում են, թե ինչպես ուտե-  
լիք պատվիրեն. Տղաներից մեկն ասում է.

- Լավ տղերք, մի մտածեք, ես մի քիչ գիտեմ ֆրանսերեն, էշը ցեխից  
կհանեմ

Կանչում են մատուցողին եւ ֆրանսերեն «իմացողը» սկսում է պատ-  
վիրել.

- Լը խորոված, լը վիսկի, լը օոի, լը հաց եւ այդպես շարունակ:  
Որոշ ժամանակ անց մատուցողը բերում է պատվիրածները եւ  
սկսում դասավորել սեղանին.
- Տեսաք, տղերք, ես ինչ լավ գիտեի ֆրանսերեն, - պարծենում է  
Մատուցողը լսում, լսում է եւ հեգնանքով ասում.
- Լսե, տղաս, եթե ես հայ չըլլայի դուք լը էշու պոչ ալ չեիք ուտեր.

\*\*\*

Մի երիտասարդ կին ճաշ եփել չի իմանում եւ ամեն անգամ խորհուրդներ է հարցնում իրենց հայրենադարձ հարեւանուհուց Հարեւանուհին դեռ նոր սկսում է բացատրել, երիտասարդ կինն ընդհատում է.

- Հաաա՝, ես արդեն գիտեի

Մի օր էլ նորահարսը որոշում է տոլմա եփել եւ նորից գնում է հարեւանուհու մոտ Հարեւանուհին սկսում է բացատրել, «շատ իմացողն» անմիջապես ասում է

- Ես արդեն գիտեի ատ ամենը

Մեծահասակ կինը, իբր ի միջի այլոց, ասում է.

- Աղջիկս, մոռցա ըսել, եթե կուզես շատ համով ըլլա եւ երիկո (ամուսինդ) հավնի, քանի մը կտոր ալ անոր վարտիքեն կտրտե եւ դիր

- Տիրուիի մորաք, ճիշտը ըսեմ նե, ադ մեկը չե գիտեր. Ամա հազնված ըլլա՞՝, չենե՞ մաքուր

\*\*\*

Մի հայրենադարձ հյուր է գնում իր բարեկամներին Տանտերերը սեղան են բացում եւ սկսում են ճաշել Հյուրն ուտում է շատ ագահաբար Տանտերերը զարմացած իրար են նայում.

Ամուսինն ասում է.

-Օօօ՞, ջանըն, անքան կերա՝, անքան կերա, որ ավանակ դարձա

Տանտիրուիին է շարունակում ամուսնու խոսքը

- Հապա ես որքաան կերա, խոզ դարձա, խո՞զ

Հյուրն իր համար հանգիստ մաքրազարդում է սեղանը եւ մտքում ասում.

- Դահա ուո՞ւր եք Անքա՞ն պիտի ուտեմ, անքա՞ն, որ ավանակն ալ ճարի, խոզն ալ հետը.

\*\*\*

Մի հայրենադարձ ճաշարանում ծուկ է պատվիրում եւ երկար ժամանակ սպասում է իր պատվերի կատարմանը Նյարդայնացած նայում է այս ու այն կողմ Վերջապես մոտենում է մատուցողը եւ ասում.

- Ներեցեք, պարոն, շուտով ծեր պատվերը կկատարվի:

Հայրենադարձը նայո՞ւմ-նայում է ու հեգնանքով ասում

- Լսե, տղաս, եթե դուք ծուկ որսալ չեք գիտեր, ես կըրնամ ծեզի հեշտ ծեւը սորվեցնել

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Արեւմտահայերի խոհանոց ----- 3

## ԱՌԱՋԻՆ ճԱՇԱՏԵՍԱԿՆԵՐ

Սպիտակ լոբու փլակի -----	6
Հավի մսով ապուր -----	6
Թամապուր -----	7
Սպիտակ ապուրք -----	7
Փրասա (պրաս, սավզի) -----	7
Թարխանայի պատրաստումը -----	8
Թարխանա ապուր -----	8
Սուլու քյոֆթե (քյուֆթա բոզբաշ) -----	9
Թյուրլի (այլազան, աջարսանդալ) -----	9
Կանաչ բակլայով ճաշ -----	10
Կանաչ լոբով ճաշ -----	10
Բամիայով ճաշ -----	10
Զըրվըրա -----	11
Նեխուրով /քյարավուզով, սելդեբյ-ռուս./ ապուր -----	11
Սոխով յահնի (չախորիլի) -----	11

## ԵՐԿՐՈՐԴ ճԱՇԱՏԵՍԱԿՆԵՐ

Ղըյմայի պատրաստումը -----	12
Կարտոֆիլով մուսակկա -----	12
Ծաղկակաղամբով մուսակկա -----	12
Գարնի յարջին (փորը ճեղքած) -----	13
Իմամ բայըլդը (իմամն ուշագնաց եղավ) -----	13

Սմբուկը ծվով	14
Սինի մանթըսը	14
Ղըզըրթմա	14
Կարմիր լորի	15
Իչլի (միջուկով, լցոնած) քյոֆթե	15
Քեշքեկ (հարիսա)	16
Վերմիշելով եւ բրնձով փլավ	16
Բրնձով եւ ոսպով փլավ	16
Չամչով փլավ	17
Բլղուրով փլավ	17
Կանաչ ոլոռը ծվով	17
Թաթար քյորեի	17
Ծաղկակաղամբը ծվով	18
Քյոֆթե (կոտլետ)	18
Յալեափի քյոֆթե	18
Լոլիկով ծվածեղ	19
Տժվժիկ	19
Տապակած ջիյեր (սեւ թոք)	19
Թաս քերաբ	19
Դդմիկով կոտլետ	20
Դդմիկը ծվով	20
Դդմիկով տոլմա	20
Ամառային տոլմա	21
Սոխով տոլմա	22
Պասուց տոլմա	22
Յալան (սուտ) տոլմա	23

Եցոնած կարտոֆիլ	23
Հավի մսով կոտլետ	23
Կարտոֆիլով ձվածեղ	24
Սիսեռով կոտլետ	24
Թոփիկ (գմղակ)	24
Երիշտա	25
Երիշտան դըյմայով եւ լոլիկով	25

## **ԶԿՈՎ ՈՒՏԵՍՏՆԵՐ**

Զկով չորբա (ձկնապուր)	26
Տապակած ձուկ	26
Չուկը կանաչ սոխով	26
Չուկը կարտոֆիլով	27
Զկով կոտլետ	27
Զկան խավիարով պաշտետ	27

## **ԽՈՐՏԻԿՆԵՐ (ճախուտեստներ)**

Տնական երշիկ	28
Մսով ռուլետ	28
Մսով եւ ձվով ռուլետ	29
Բումբար	29
Սեւ թոքով ռուլետ	30
Սուջոխ	30
Բաստուրմա	31

<b>ՈՒՏԵՍՏՆԵՐ ՈՒՂԵՂՈՎ</b>	<b>32</b>
--------------------------	-----------

## ԱՐՑԱՆՆԵՐ

Թարուկե	33
Քամած մածունը հավի մսով	33
Ամառային սալաթ	33
Ագարիկոնով (շամպինյոն)	34
Սմբուկը ընկույզով	34
Կանաչ լոբով	34
Ծաղկակաղամբով	34
Բազուկով	34
Տորթ-սալաթ	35
Համուս	35
Սկորդալյա	36
Կարտոֆիլով փյազ (սալաթ)	36
Ռադիկյայով (խատուտիկ, օдуванчик)	36
Սպիտակ լոբով փյազ	36
Կանաչ ոլոռով	37
Նեխուրով (քյարավուզ)	37
Մառոլով (հազարով)	37
Բողկով	37
Կաղամբով	37
Ստեպինով	38
Զվով	38
Սացիվի	38
Զաջըխ (մածնափրոշ)	38

## ՔԱՂՑՐԱՎԵՆԻՔ

Ղուրաբիե (շաքարլոխում) -----	39
Շամալի -----	39
Ֆինիկյա -----	40
Թուլումբա -----	40
Փախլավա -----	41
Ղաղահֆ -----	41
Թթխմորով բուլկի -----	42
Սարը (շեկ) բուրմա -----	42
Փափիոն (թիթեռնիկ) -----	43
Դանըմի պորտ -----	43
Փքաբլիթ (օղակ) -----	43
Էկլեր -----	44
Բուլուրյա -----	45
Խնձորով թխվածք -----	45
Փողաշուշան (կալա-ռուսերեն) -----	46
Դալվա -----	46
Սպիտակահատ ծավարով (մանայ կրոնա) հալվա -----	47
Բանան -----	47
Խավիծ -----	47
Տրյուֆել -----	48
Անուշապուր -----	48
Կաթնապուր -----	48
Փելիզե -----	49
Նիշաստա -----	49
Խորոված դդում -----	49

Ատամնահատիկ	50
Ղափամա	50

## **ԿԱՐԿԱՆԴԱԿՆԵՐ**

Հանըմի պորտ	51
Լահմաջուն (լահմա միս եւ ջուն խմոր)	51
Չեբուրեկի	52
Կարկանդակի խմոր	53
Կարտոֆիլով կարկանդակ	53
Սպանախով կարկանդակ	53
Սպանախով բյորեկ	54
Պանրով կամ մսով բյորեկ	54
Հացով տաք խորտիկ	54
Բոլիչա	55
Աղի ձողիկներ	55
Հաց	56
Մածուն	56

## **ՏՈՆԱԿԱՆ ՍԵՂԱՆԻ ՀԱՄԱՐ**

Կարմիր լոլիկով կակաչներ	57
Ձվով նավակներ	57
Սունկ	58
Վարունգով նավակներ	58
Լցոնած պղպեղ	58
Բաղ բաղիկների հետ	59
Կաթնաշոռով գնդիկներ	59

Զամբյուղներ սալաթների համար -----	59
Դդմիկը կոտլետի խճողակով -----	60
Կարմիր լոլիկով սալաթ -----	60

## **ԸՄՊԵԼԻՔՆԵՐ**

Նշով -----	61
Նարնջի կեղեւով -----	61
Կաթով -----	61
«Յուափիով» -----	62
Կեռասի կամ բալի կորիզներով -----	62
Անանուխով -----	62
Լուծվող սուրճով -----	62
Դեղձի կորիզով -----	63
Կիտրոնի կեղեւով -----	63
Նռով -----	63
Կոկտեյլ -----	64
Վանիլիա -----	64
<b>ՄԻ ԶԻՉ ԷԼ ՀՈՒՄՈՐ -----</b>	<b>65</b>

**ԱՐԵՎԱՏԱՐԱՅԵՐԻ  
(«ԱԽՊԱՐԱԿԱՆ»)  
Խ Ռ Ա Ն Ո Ց**

Հրատարակիչ տնօրեն՝ ՎԱՐՐԱՄ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Համակարգչային  
շարվածքը՝ ԶԱՐՈՒՀԻ ՄԽԻԿՅԱՆԻ

Սրբագրիչ՝ ԹԱԳՈՒՅԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Լուսամկարները՝ ՀԵՆՐԻԿ ԱՍՏՈՆՅԱՆԻ  
ՆԱՐԻՆԵ ԶԻԼՖՈՒԴԱՐՅԱՆԻ

Ձեռավորող՝ ԽՈՍՐՈՎ ՀԱԿՈԲՅԱՆ

... . . . .

Չափսը 64x42 1/16 Ծավալը 4.75 տպ. մամուլ.

Տպագրությունը օֆսեթ: Թուղթը օֆսեթ-1

Տպաքանակը 300 օրինակ:

Տպագրված է «ՎԱՎ-ՊՐԻՍՏ» ՍՊԸ տպարանում

